

# ՄԱՐԶԻԿ

հսլս


Մարզիկ

ՄՅԼԵ ՐԻԱՅԻԿԵ ՏՈՒՐԵ  
ՏՎԵՐԻՄ ԵՄԵԿԵ ԵՄԵՆՏԵՄ ԲԻՐՈՒ

marzig

SPORTS MAGAZINE

3107 ՏԱՐԻ, 2012, ԹԻԻ 1 (355) - VOL. XXXI N° 1    ՎՍԵՆԵ ԽԱԴԻԵ ԹԼԱԻՆ - ԵԾԵԾ ԱՕՒԼ





# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը ուրախութեամբ կը յայտարարէ, որ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան կազմակերպած Հայապահպանութեան ծիրին մէջ «Լաւագոյն երիտասարդական կազմակերպութիւնը» մրցումին առաջին երեք դիրքերը ապահոված են Հ.Մ.Ը.Մ.ի զանազան շրջանները:

Սփիւռքի նախարարութեան կազմակերպած այս մրցանքին մասնակցած են սփիւռքահայ աւելի քան 25 միութիւններ ու կազմակերպութիւններ: Հրապարակուած արդիւնքներու հիման վրայ, Հ.Մ.Ը.Մ. Լիբանան արժանացած է առաջին դիրքին՝ ստանալով յատուկ վկայագիր եւ նիւթական պարգեւ: Երկրորդ դիրքին տիրացած են Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Հարաւային Ամերիկայի եւ Լոնտոնի շրջանները՝ կրկին

արժանանալով յատուկ վկայագիրներու եւ նիւթական պարգեւներու: Իսկ երրորդ դիրքին տիրացած են Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ եւ Քուէյթի շրջանները՝ արժանանալով վկայագիրներու:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը իր շնորհաւորութիւնները կը փոխանցէ աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին՝ արձանագրուած հրապարտալից արդիւնքներուն համար: Ներկայացուած արդիւնքները կը փաստեն, որ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը տակաւին հաւատարմօրէն կը շարունակեն գործել հայապահպանման ի նպաստ եւ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին ուղիով:

Հ.Մ.Ը.Մ.ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՊԱՏՈՒԱԲԵՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ. Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ «ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ» ՄՐՑԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԴԻՐՔԵՐՈՒ ԵՕԹԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՒՆ



Դեկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ. Լիբանան հանդիսացաւ «Համահայկական լաւագոյն երիտասարդական կազմակերպութիւն»ը՝ Սփիւռքի նախարարութեան եւ Համաշխարհային Հայկական Քոնկրէսի կազմակերպած մրցանքին:

Արդարեւ, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութիւնը 19 Դեկտեմբերին յայտարարեց, որ 2011-ի «Համահայկական լաւագոյն երիտասարդական կազմակերպութիւն» մրցանքին իր մասնակցութիւնը բերած Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանը խլած է առաջին դիրքը եւ «Հայապահպանման գործին իր ունեցած նշանակալի աւանդին համար» կը նկատուի «լաւագոյն երիտասարդական կազմակերպութիւն»ը:


Նոյն յայտարարութիւնը նշեց, որ մրցանքի երկրորդ դիրքին արժանացած են Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Արեւմտեան Մ. Նահանգներու, Հարաւային Ամերիկայի եւ Լոնտոնի շրջանները, իսկ երրորդ դիրքին տիրացած են Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ եւ Քուէյթի շրջանները:

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ  
ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ  
Ամիս մը ետք, 18 Յունուարին տեղի ունեցաւ մրցանակակիրներու մրցանա-

կաբաշխութիւնը հանդիսութեամբ մը, որուն ներկայ գրտնուեցան Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան, Համաշխարհային Հայկական Քոնկրէսի փոխ նախագահներ Արամ Սարգսեան եւ Վլատիմիր Աղայեան, գիտնականներ, դասախօսներ, լրագրողներ եւ բազմաթիւ հրաւիրեալներ:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, մրցանակակիր եօթը շրջաններու մրցանակները ստանձնեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամ եղբ. Ռոմանոս Պետրոսեան:

Նշենք, որ մրցանքին իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ 25 կազմակերպութիւններն ու միութիւնները.- «Հայկի սերունդ» երիտասարդական հասարակական կազմակերպութիւն (Ստեփանակերտ, Լ.Ղ.Հ.), Խրիմեան Ճեմարան (Նիւ Եորք, Մ. Նահանգներ), ՀԲԸՄ-ի Փարիզի երիտասարդական կազմակերպութիւն (Փարիզ, Ֆրանսա), Հայ երիտասարդներու «Կռունկ» միութիւն (Լիպեցկի մարզ, Ռուսիա), «Կիլիկիա» էսթոնահայկական ազգային ընկերութիւն (էսթոնիա), Պերմի հայ մշակոյթի կեդրոն (Պերմի մարզ, Ռուսիա), ՍԻՎԱՄ (Ռուսիա), Մոսկուայի հայ երիտասարդական ընկերակցութիւն (Մոսկուա, Ռուսիա) ...








# Թիւիւն հիւերը

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي مارزيك



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

31ՐԴ ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 1 (355)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 Սեդա Պէշեան (Լիբանան),  
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),  
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.  
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան  
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան  
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ  
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ  
 Պատրիկ Կիւլպէնկեան, Գրիգորիս  
 Պողարեան, Աթո Մոսիկեան  
 (Լիբանան), Յարութ Մատենլեան  
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),  
 Զարեհ Տէրվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշո Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրժ Համուտ, ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 4000 լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան  
 սակ ճշդուած է 48000 լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$70,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ


■ Խմբագրական	2
■ Պատմութիւն	22
■ Մեր Տեսակցութիւնները	25
■ Մասնաճիւղէ Մասնաճիւղ	30
■ Մեր Կորուստները	34

## ԲԱԺԻՆՆԵՐ

■ Միջազգային	28
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեացքով	40

## 100-ԱՄԵԱԿ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ

■ Սկաուտութեան Մուտքը Հայոց Մէջ	3
■ Տղայոց Գումարտակներ	5
■ Սկաուտութեան նախակարապետ կտրիճներու կազմակերպութիւնը	6
■ Վարդանանցը Հ.Մ.Ը.Մ.ի «Սկաուտներու Օր»	7
■ Սկաուտական շարժման ծնունդը եւ Յ. Թ. Հինդլեանի առաջնակարգ դերը	8
■ «Boy scout»-ը եւ իր կեանքին նպատակը	10
■ Հայ պոյ սկաուտներ	16







# ԵՄԲԻՆԻՆԵՐ

## ԱՆՏՐԱԺԵՇՏ ԹԹՈՒԱԾԻՆԸ

(ՀԱՅ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

**2**012-ը յոբելենական տարի մըն է հայ սկաուտութեան համար: Հայաստան թէ Սփիւռք տօնակատարութիւններու շարքով մը կը նշեն 100-ամեակը հայ սկաուտութեան հիմնադրութեան, որուն պատիւը կ'երթայ Հ.Ս.Ը.Ս.ին:

Կ'արժէ 100 տարի ետ երթալ, Առաջին աշխարհամարտը նախորդող տարիները, փոխադրուիլ Պոլիս, ազգային-մշակութային եռուզեռի այդ քաղաքը, կարելի հարազատութեամբ հասկնալու համար արժէքը այն շարժումին, որուն առաջնորդները իրենց տեսիլքով լուսաւորեցին հայ երիտասարդութեան ուղին:

Միջազգային սկաուտական շարժումը հազիւ ծնունդ առած, գտնուեցան հայեր, դաստիարակ մարդիկ, որոնք անմիջապէս ընթռնեցին անոր կարելորութիւնը սերունդներու առողջ դաստիարակութեան գործին մէջ: Հինդլեան, Քրիսեան եւ Յակոբեան եղան անոր նախակարապետները եւ անմիջապէս գործի լծուեցան Պոլսոյ խանդավառ մթնոլորտին մէջ՝ պատրաստելու համար ապագայ հայը, առողջ մարմնի մէջ առողջ մտքով երիտասարդը, որ հարազատ ժառանգորդը պիտի ըլլար իր արիարանց պապերուն:

Բայց ինչպէս համամարդկային ամեն շարժում, սկաուտութիւնն ալ մեքենաբար չփոխադրուեցաւ մեր կեանքէն ներս: Հայացուեցաւ: Սկաուտը կոչուեցաւ Արի, իսկ «Միշտ պատրաստ» նշանաբանին տեղ որդեգրուեցաւ նոյնքան վեհ այլ նշանախօսք մը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»:

Մեծ եղեռնը իր առաջին թափին մէջ կասեցուց սկաուտական շարժումը մեր կեանքէն ներս: Սակայն, ինչպէս թշնամին միւս բոլոր մարգերէն ներս չյաջողեցաւ հայաջինջ իր ծրագիրներուն մէջ, սկաուտութեան պարագային եւս, Պոլսոյ մէջ նետուած արմատները ծառ դարձան եւ ծլարձակուեցան Սփիւռքի եւ ապա՝ նորանկախ Հայաստանի տա-

րածքին, ուր պատանեկան եւ երիտասարդական այլ միութիւններու կողքին, սկաուտութիւնը ունեցաւ իր պատուոյ տեղը, արժանանալով համապատասխան գնահատանքի:

Այսպէս, սկաուտութիւնը տարածուեցաւ շատ արագ: Ու որքան շատ տարածուեցաւ ու զարգացաւ, այնքան աւելի մեր ժողովուրդին բացայայտ դարձաւ, որ սկաուտը այն չէ, որ պարզապէս կիրակնօրեայ հաւաք կը կատարէ, տողանցք, արշաւ եւ բանակում կը կազմակերպէ: Սկաուտը ամեն բանէ առաջ Քիփլինկի բնութագրած ապագայ մարդն է, պատանին, որ մարմնի, մտքի ու հոգիի առողջութեամբ կը պատրաստուի մարդկային ու ազգային գալիք պատասխանատուութիւններու:

Ահա թէ ո՛ր պէտք է փնտռել միջազգային այս շարժումին մեծագոյն արժէքը, որմէ օգտուիլ պէտք է գիտնալ ազգովին, իբրեւ պետութիւն եւ ժողովուրդ: Հայ կեանքը, արդարեւ, բոլոր ժամանակներէ աւելի, այսօ՛ր, կարիքը ունի մարդկային ու ազգային պատասխանատուութիւններու դրօշը բարձր պահողներու:

Հայաստանի մէջ՝ քաղաքացիական պարտաւորութիւններու գիտակից, ըՍփիւռքի մէջ՝ ազգային պատասխանատուութիւններու տէր կանգնող հայ մարդ ունենալու պահանջը անյետաձըգելի անհրաժեշտութեամբ կը ներկայանայ բոլորի՛ս: Իսկ սկաուտութիւնը այն իտեալ միջավայրն է, որուն առողջարար մթնոլորտին մէջ, կարելի է լաւագոյնս կերտել նման մարդիկ, հայեր, որոնք իրենց պատրաստութեամբ, պահանջկոտութեամբ եւ պարտաճանաչութեամբ զատորոշուին բոլորէն եւ դառնան մեր կեանքին անհրաժեշտ թթուածինը ներարկող ուժեր:

100-ամեայ փորձառութիւնը այս իմաստով կարելոր երաշխիք մըն է, որ սկաուտութիւնը տակաւին շատ բան ունի տալիք մեր կեանքին՝ այսօր եւ վաղը:



# ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

**Պ**էյտրն Փաուրլ արդիական ըսկաուտութեան հիմը կը դնէ է 1908-ին եւ հագիւ չորս տարին բոլորած, այս շարժումը իր արձագանգը կը գտնէ հայոց մէջ:

Թէ ո՞վ առաջին նախաձեռնողը եղած է Պոլսոյ մէջ, դարձած է վէճի նիւթ, մինչ այդ խնդրին լուծումը, մեզի՝ սկաուտներու համար, այդ անձն է մեր ընդհանուր սկաուտապետ Գրիգոր Յակոբեան:


Մամուլով, առաջին անգամ, Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ»ն է, որ 1912 Յունուար 15 թիւով անդրադարձած է, «Տղայոց Գումարտակներ» վերնագրով [Տեսնել էջ 5 - «Ս.»]:

Բայց, սկաուտական գրականութեան գալով, Յովհաննէս Հինգլեանն է իսկական նախակարապետը: Առաջին անգամ համակրելի եւ բազմարդիւն մանկավարժն է, որ նոյն «Մարմնամարզ» թերթին մէջ գրած է սկաուտական շարժման մասին 1912 Մայիս 15-ի թիւէն սկսեալ: Իր յօդուածները իբր խորագիր ունեցած են «Boy Scout»ը եւ իր կեանքին նպատակը» եւ «Հայ պոյ սկաուտներ», [Տեսնել էջ 10-15 եւ էջ 16 -21,- «Ս.»]:

Հինգլեան, տեսականէն գործնականի անցնելով, իր սեփական դպրոցին մէջ («Նոր Դպրոց») հիմնած է սկաուտական խումբ մը. ոմանք կ'ըսեն առաջին սկաուտական խումբը, զոր նախ վարած է Գրիգոր Յակոբեան եւ յետոյ, այս վերջինին թելադրութեամբ՝ Շաւարշ Քրիսեան:

Սկաուտական խումբ կազմուած է նաեւ Սկիւտարի մէջ, ինչպէս կը վկայէ «Մարմնամարզ» թերթին մէջ լոյս տեսած «Հայ սկաուտներու կազմակերպութեան առժամեայ Տնօրէն Ժողովոյ» յայտարարութիւնը, տրուած 1913 Մարտ 16-ին, Սկիւտարի Յառաջդիմասիրաց Միութեան սրահին մէջ, Շ. Քրիսեանի կողմէ կատարուած բանախօսութենէ մը վերջ: Հոն որոշուած է՝

1. Առժամեայ հանգամանքով կազմել Հայ Սկաուտիզմի Տնօրէն Ժողովը, թէ՛ ներկաներուն մէջէն յարմարագոյննե-



րով եւ թէ Պոլսոյ մէջ ուրիշ համակիրներով ու հեղինակաւոր անձնաւորութիւններով:

2. Ներկաներու միացեալ թիւով կազմել, միշտ առժամեայ հանգամանքով, Սկիւտարի Հայ Սկաուտիզմի Տեղական Ժողովը, որ անմիջապէս պիտի սկսի գործունէութեան՝ պատրաստելով թէ՛ օժանդակ սկաուտներու եւ թէ՛ բուն սկաուտներու խումբերը, զորս վաւերացնելու պաշտօնը կը վերաբերի յառաջիկայ վերջնական Տնօրէն Ժողովին:

3. Հայ սկաուտիզմի ընդհ. ժողովը, որ կը կազմուի բոլոր չափահաս երկսեռ սկաուտներէ, պիտի գումարուի անմիջապէս որ գէթ Պոլսոյ երեք տարբեր թաղերու մէջ սկաուտական կազմակերպութիւն տեղի ունենայ, եւ պիտի տայ հայ սկաուտիզմին իր վերջնական հանգամանքը:

4. Ընտրուելիք Տնօրէն Ժողովին յանձնել մշակումը հայ սկաուտիզմի վերջնական ծրագիր-կանոնագիրին, զոր պիտի վաւերացնէ առաջին ընդհանուր ժողովը:

Հոն ձեռնարկուած է առժամեայ Տնօրէն Ժողովի ընտրութիւնը, որուն անդամներն եղած են՝ տիկնայք Նիկողոսեան, Բարսեղեան եւ Շահրիկեան ու տեարք Նիկողոսեան, Հինգլեան, տոքթ. Ուզունեան, Շ. Քրիսեան, Գ. Շահինեան, Լ. Թաշճեան, Մ. Սկրեան, Վ. Թէքէեան եւ Սարգիս Մինասեան:

Իսկ Սկիւտարի առժամեայ Տեղական Ժողովի անդամ ընտրուած են՝ օրիորդք Տայեան, Տէր Սահակեան, Պուշաքճեան, Վ. Կեվրէկեան, Մ. Գալուստեան, Յովակիմեան, ու տեարք Ուշագլեան, Հաննէսեան, Կէօզիւպէօյիւքեան, Հ. Ճիգմէճեան եւ Տէր Աւետիսեան:

Գաւառներու մէջ սկաուտական շարժումը մուտք գործած է, առաւելապէս, շնորհիւ Հինգլեանի հրատարակութեանցան շուտով արձագանգ գտաւ գաւառի հայաշատ եւ յառաջդիմասէր կեդրոններու մէջ, այսպէս օրինակ՝ գրեթէ միաժա-



մանակ 1913-ի գարնան վերջաւորութեան, կորիզը դրուած է Չմշկածագի (Խարբերդի նահանգ, Տերսիմ) Իւչպէկ թաղի դպրոցական սկաուտ խումբին, որուն հիմնադիրները եղած են բարձրագոյն ուսում ստացած ու հայրենիք վերադարձած երկու երիտասարդ նահատակ ուսուցիչներ՝ Ղազարոս Գույումճեան եւ Պօղոս Զէննէեան:

Քսան հոգիէ բաղկացած այդ առաջին խումբը ունէր կուկիկ համազգեստ մը, որ պտուղն էր տիկիները Գույումճեանի եւ Վարդանոյշ Զէննէեանի, ու յետոյ՝ տիկին Վահան Չերագի ձեռներէց ոգիին ու շատ մօտիկ էր այսօրուան կառուցուածքին, միայն թէ տաբատը կու գար կոճկուելու ծունկէն անմիջապէս վար, վեր բարձրացող գուլպաներուն ծայրը, գլխաբաց, պարզ գօտիով, փողկապով եւ գաւազանով: Խումբը ունեցած է սկաուտական գործունէութիւն, կատարելով գանազան հեռաւոր արշաւներ:

Պոլսոյ մէջ թէ գաւառի, սկաուտական շարժումը հազիւ հիմ դրած էր, երբ ընդհանուր պատերազմի աղէտը (1914-1918) պայթեցաւ մասնաւորաբար հայ ժողովուրդի գլխուն, պահ մը շատ մռայլ հեռանկարով:

Գալով արեւելահայութեան, պէտք է սպասել մինչեւ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը՝ հոն սկաուտական խումբեր կազմակերպուած տեսնելու համար, ու մինչդեռ արեւմտահայութեան մէջ մարզանքը շատ կանուխէն մուտք գործած էր եւ հետզհետէ փայլուն արդիւնքներ կ'արձանագրէր, կովկասահայութիւնը անհաղորդ մնացած էր եւ արեւելահայ երի-

տասարդութիւնը անտարբեր էր մարզանքի վերաբերմամբ: Արդարեւ, ըստ Գ. Խաժակի, 1912 Սեպտեմբերի «Մարմնամարզ»-ի մէջ բերած վկայութեան՝ «Կովկասահայութիւնը մարզում է միայն ուղեղն ու սիրտը, եւ անտես է առնում միամրող աշխարհ - մարդու ֆիզիքականը»:

Հոն՝ մարմնակրթանքի հանդէպ այս արհամարհանքը շարունակուեցաւ մինչեւ ընդհանուր պատերազմի եւ ուսական յեղափոխութեան ատենները, երբ առաջին անգամ Թիֆլիսի մէջ, Եգնիկ Քաջունի սկսաւ նախաձեռնել մարզական շարժումը ու ապա հետզհետէ նորակազմ կառավարական շրջանակներն ալ սկսան ուշադրութեան առարկայ դարձնել նոր սերունդի ֆիզիքական դաստիարակութիւնը:

Այնուհետեւ Պոլսոյ մէջ կազմուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ճանչցուեցաւ որպէս պետական կազմակերպութիւն ու Հայաստան դրկուեցան Վահան Չերագ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ Եազմաճեան, իբրեւ կազմակերպիչներ մարմնակրթական եւ սկաուտական շարժումին:

Հայաստանի խորհրդայնացումէն յետոյ, Հայաստանի մէջ, պատանիներու դաստիարակութիւնը դարձաւ պետական մենաշնորհ եւ գործ, ու Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարժումին յաջորդեցին Պատկոմներու, Պիոներներու եւ Կոմսոմոլներու կազմակերպութիւնները:

ՎԱԶԳԵՆ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

# HOTEL




# PAVILLON MONCEAU

## PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

### PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



ՇԱԽԱՐԵ ՔՐԻՍԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ  
ՀԱՅ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

# ՏՂԱՅՈՑ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐ

(«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ», 15 ՅՈՒՆՈՒԱՐ 1912)

**Ա**նգլիոյ մէջ տղոցմէ կազմուած հսկայ կազմակերպութիւն մը կայ, որ բացօդեայ կեանքի, մարզանքներու, կենդանիներու եւ բնական կեանքի պայմաններու սիրահար է- այդ կազմակերպութեան մասնակցողները կը կոչուին սկաուտ (scout) ու պարտաւոր են անհրաժեշտաբար Ֆիզիքական եւ բարոյական լաւ յատկութիւններ մարմնացնել:

Այդ կազմակերպութիւնը ամէն բանէ աւելի էներժի, կամքի, Ֆիզիքական շարքաշուծեան, ձեռներէցութեան ու նկարագրի կազմութեան պատրաստող կատարեալ դպրոց մըն է, որ այսօր իր դրօշին տակ կը հաշուէ 200,000 պատանիներ Անգլիոյ, իսկ 250,000 պատանիներ ալ Միացեալ Նահանգաց մէջ: Ոմանք այնպէս կը խորհին, թէ անիկա միմիայն գինուորական կեանքի պատրաստող կազմակերպութիւն մըն է, բայց այս ենթադրութիւնը սխալ է, քանի որ այդ երկու երկիրներուն մէջ գինուորական ծառայութիւնը պարտաւորիչ չէ, որով եւ ոչ մէկը պէտք ունի ատոր պատրաստուելու:

Այդ կազմակերպութեան հիմնադիրները նպատակ ունին տղայոց մէջ գարգացնել Ֆիզիքական մարզանքի սէրը եւ գաղթային կեանքի ճաշակը. անոնք վերջապէս կ'ուզեն որ քաղաքակրթիչ եւ սակայն հիւժող վարժարաններուն քով գտնուին նաեւ վայրի կեանքի վարժեցնող դպրոցներ, որոնց առաջինին մէջ անհաւասարակշիռ կրթութիւն մը առնող պատանիները երկրորդին մէջ կարող ըլլան իրենց Ֆիզիքական եւ



մտաւորական կարողութիւնները իրարու հետ հաշտեցնել:

Ինչպէս ամէն դպրոցի մէջ, այս բնական վարժարանին հետեւողները ունին իրենց ծրագիրը, որուն նշանաբանն է՝ «Միշտ պատրաստ»:

Ահաւասիկ իրենց կրթական ծրագրէն առնուած տասը յօդուածներ, որոնք ապահովաբար շատ աւելի կ'արժեն՝ քան մեր շատ մը վարժարանները իրենց բովանդակ գիտութիւններով եւ ութիւններով:

1. Սկաուտի մը խօսքը նուիրական է:
2. Սկաուտը անկեղծ է:
3. Սկաուտին պարտականութիւնն է ինքզինքին օգտակար ըլլալ եւ ուրիշին օգնել:
4. Սկաուտ մը բոլոր մարդկանց բարեկամը, իսկ ուրիշ սկաուտի մը եղբայրն է:

5. Սկաուտը քաղաքավար է:
6. Սկաուտը կենդանեաց բարեկամն է:
7. Սկաուտը գիտէ հնազանդիլ:
8. Սկաուտը միշտ գուարթ է եւ կ'երգէ:
9. Սկաուտը խնայասէր է:
10. Սկաուտը իր խօսքերուն, մտածումներուն եւ գործերուն մէջ մաքուր է:

Ահաւասիկ իտէալ բարոյականի մը մէկ կատարեալ ամփոփումը, սկաուտը հազիւ 11-18 տարեկան, իր պարզ համագրեանով եւ պարզ գաւազանով գինուած կը պտրտի լեռնէ լեռ, ձորէ ձոր, անտառէ անտառ, շնչելով մաքուր օդ եւ վայելելով առողջ կեանք մը:

Վերջերս, Անգլիոյ նորընտիր Ճորճ հինգերորդ թագաւորը Ուինտսորի արքայական պալատին մարզագետիներուն վրայ աչքէ անցուց Անգլիոյ զանազան կողմերէն եկած 30,000 սկաուտներ. վերջապէս Անգլիա մեծ է նոյնիսկ իր փոքր տղաներով:

Որքա՛ն փափաքելի պիտի ըլլար որ զանազան հայ վարժարաններու աշակերտներ, պատասխանատու մեծի մը ընկերակցութեամբ, պարբերաբար պտոյտներ կազմակերպէին զանազան բացօդեայ վայրեր:

Եթէ կ'ուզէք տղայոց մէջ բարոյականը վառ պահել, անոնց սորվեցուցէք բնութեան սէրը եւ անոր գեղեցկութիւնները:





# ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏ ԿՏՐԻՃՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

**Ս**կառուութիւնը 17-րդ դարուն գոյութիւն ունեցած է հայ կեանքին մէջ: Արդարեւ, Ս. էջմիածնայ «Արարատ» ամսագիրի հին թիւերէն մէկուն մէջ,- կը գրէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Տիգրան Խոյեան,- կը հանդիպինք կանոնադրութեան մը, որ 1680-ական թուականներէն սկսելով մինչեւ 19-րդ դարու սկիզբները յաջորդաբար վաւերացուած է Եղիազար, Աղեքսանդր եւ Արդութեանց Յովսէփ Կաթողիկոսներէն. ամէնէն վերջը՝ Պեսարապիոյ Գրիգոր Արքեպիսկոպոսէն:

Կանոնադրութիւնը կը վերաբերի Մոլտաւիոյ Պոթուշան եւ ուրիշ քաղաքներու հայ պատանիներու կազմակերպութեան (Պրասրաւա), որուն անդամները Կտրիճ բառով կ'որակուէին:

Այդ կազմակերպութիւնը նպատակ ունէր յիշեալ քաղաքներու պատանեկութեան հոգեկան ու մարմնական ազնուացումը:

Յիշեալ կանոնադրութեան համաձայն, իւրաքանչիւր պատանի որ կը թեւակոխէր 12 տարեկանը, պարտաւոր էր արձանագրուել իբրեւ **Նախընծայ**՝ Պրասրաւային եւ հաղորդուել ու երգելի էտք, պատկանիլ այդ կազմակերպութեան Կտրիճ անունով, մինչեւ ամուսնութիւնը:

Կտրիճները, իրենց թիւին համեմատ, կ'ունենային խմբապետ մը կամ խմբապետներ, որոնք կ'ընտրուէին պատանիներու ժողովին կողմէ եւ կը վաւերացուէին քաղաքին մեծերէն:

Կտրիճներու պարտականութիւններն էին.-

- Ամէն օր, եւ մանաւանդ ամէն Կիրակի, ան-

պայման եկեղեցի երթալ ու ներկայ ըլլալ Ս. Պատարագի արարողութեան:

- Համայնքին ունէ մէկ անհատին (հարուստ թէ աղքատ) պսակի, յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւններուն ներկայ ըլլալ անպատճառ եւ մասնակցիլ երգեցողութեանց:

- Տօնական օրերուն շնորհաւորութեան համար իրենց խմբապետին տունը երթալ, ուրկէ, անոր առաջնորդութեամբ պարտաւոր էին բոլոր հայ քաղաքացիներուն տունները այցելել եւ շնորհաւորել զիրենք:

- Ամէն Շաբաթ օրերը, պատանիները կամ կտրիճները պարտաւոր էին մեռնող կտրիճներու հոգիին համար պաշտօն կատարել տալ:

- Կտրիճներէն պահանջուած ամենախիստ յատկութիւններն էին՝ կարգապահութիւն եւ բացարձակ հնազանդութիւն իրենց խմբապետին, որուն պարտքն էր գործադրել տալ վերոյիշեալ կանոնները իրենց ամբողջ խստութեամբը եւ հսկել կտրիճներու բարոյական եւ մարմնական վիճակին:

- Այս կանոնադրութեան որեւէ մէկ մասին հանդէպ տեղի ունեցած թերացումը կը պատժուէր զրամական տուգանքով, որ թերացողին յանցանքին


կամ աստիճանին համեմատ կը փոխուէր, թերացողը եթէ խմբապետ ըլլար, այդ պատիժը ալ աւելի կը սաստկանար:

- Խմբապետները (վատահ), ամբողջ քաղաքին եւ կտրիճներուն վստահութիւնը գրաւող արդարակորով երիտասարդներ էին, եւ իբր այդ իրենց պարտք կ'իյնար, վարուիլ կտրիճներուն հետ չափազանց անկողմնակալ եւ արդարադատօրէն:

- Խմբապետը երբ գինով կամ սրտնեղած վիճակի մը մէջ գտնուէր, այդ վայրկեանին ո'չ մէկ դատաւարութիւն պէտք էր ըներ, քանի որ այդ վիճակին մէջ, պահանջուած ողջմտութիւնը պիտի չունենար արդար որոշում մը տալու համար: Բոլորովին սթափելէ վերջն ալ, երբ կը դատէր Կտրիճը, անոր գործած մէկ յանցանքին համար, այդ մասին իր տուած որոշումին բացարձակապէս չէին կրնար միջամտել Կտրիճին ծնողքը կամ բարեկամները, եւ Կտրիճն ալ չէր կրնար բողոքել եղած կարգադրութեան դէմ, հակառակ պարագային, թէ՛ ինքը եւ թէ՛ ծնողքը զրամական տուգանք մը կը վճարէին, առանց դարձեալ որոշումը կարենալ փոխելու:

- Խմբապետը պարտաւոր է նոյնպէս իր խումբի նիւթապէս զօրանալուն համար ամէն առիթ օգտագործել, եւ գիտնալ մանաւանդ **տնտեսել** (ինչ որ ներկայ սկառուտական դաւանանքին մաս կը կազմէ) եւ իր գործունէութեան ալ տեղեկատուութիւնը պէտք էր ընել զինքը ընտրողներուն առջեւ:

- Բոլոր Կտրիճները պարտաւոր էին հսկել նոյնպէս իրարու վրայ փոխադարձաբար, եւ իրենցմէ մէկուն անպատշաճ մէկ ընթացքը տեսնելու պարագային, զգացնել իրեն այդ:







## ՎԱՐԴԱՆԱՆՅԸ Հ.Մ.Ը.Մ.Ի «ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՕՐ»

**Ս**կանուտական համաշխարհային 27-րդ համագումարը (Պիրմինկհամ, 1979) որոշեց Փետրուար 22-ը յայտարարել «Սկանուտի Օր», որ կը զուգադիպի սկանուտության հիմնադիրին ծննդեան տարեդարձին եւ սկանուտության հիմնադրութեան:

Վազգէն Անդրեասեանի «Յայ Սկանուտին Առաջնորդը» գիրքին մէջ (1945) կը հանդիպինք հետեւեալ ծանօթութեան.- «Յայ ըսկանուտներու հանդիսաւոր եւ պաշտօնական տօնի օր կ'առաջարկենք ընտրել Վարդանանց տօնին օրը, սկանուտական մարմիններու նախաձեռնութեամբ սարքելով թէ՛ ժողովրդական հանդէսներ եւ թէ՛ զուտ սկանուտական ճաշկերոյթներ»:

Այս մտածումը եկած է այն իրողութենէն, որ Սուրբ Գեորգը սկանուտութեան հիմնադիրին կողմէ նկատի առնուած է իբրեւ սկանուտները հովանաւորող պաշտպան սուրբ:

Հ.Մ.Ը.Մ.ի սկանուտ պատասխանատուները օրին, կրօնական նոյն հաւատքը մեկնակէտ ունենալով, Սուրբ Գեորգը փոխարինած են Ս. Վարդանով, անգամ մը եւս ազգայնացնելով միջազգային շարժումը:

Հ.Մ.Ը.Մ.ի սկանուտական խըմբապետական Ա. համագումարը (Աթէնք, 1982) Հ.Մ.Ը.Մ.ի «ըսկանուտներու օր» ընդունեց Վարդանանց տօնը, Վարդանանց նահատակներու ոգին վառ պահելու համար Հ.Մ.Ը.Մ.ական մատղաշ սերունդներուն մօտ:

Խմբապետը միշտ պէտք է առիթներ ստեղծէր, որպէսզի որքան կարելի է, յաճախակի կերպով Կտրիճները կարենան մէկտեղ հաւաքուիլ եւ իրարու հետ շփման մէջ ըլլալ: Իսկ իր հրաւերին չպատասխանելու յանցանքը գործող Կտրիճը կը յանդիմանուէր եւ դրամական տուգանքի կը դատապարտուէր:

Ինչպէս կը տեսնուի, Մոլտաւիոյ հայերուն այդ կազմակերպութիւնը չափազանց նմանութիւն ունի մեր սկանուտականին հետ, ու Կտրիճ բառը գեղեցիկ ընտրութիւն մըն է: Խմբական կազմակերպութիւնը, ընդունելութեան պայմանները, բարոյական պարտադրութիւնները, բոլորը, չափազանց կը մօտենան Պէյտըն Փաուլի կազմակերպութեան:

Թէ ուրկէ՞ ծագում առած է այդ կանոնադրութիւնը, այդ մասին որեւէ հետք չկայ: Թերեւս Մոլտաւիոյ հայերը իրենց հետ բերած են զայն, բայց հաւանական է որ գաղթականութիւնը ինք ստեղծած է զայն, որպէսզի իրենց գաւակները մնան հայկական շրջանակի մէջ, կրթուին իրենց ոգիով եւ չայլասերին: Եւ որպէսզի

աւելի ազդու ըլլայ, վաւերացնել տրւած են զայն այն ատենուան ազգային թէ կրօնական ամենաբարձր անձնաւորութենէն՝ Կաթողիկոսէն:


Կտրիճներու եւ Սկանուտներու տարբերութիւնը կը կայանայ իրենց 200 տարի առաջ կամ ետք ըլլալուն մէջ: Առաջինները, զաւակներ՝ ոչ անկախ եւ կրօնական ոգիով սնած համայնքի մը, իրենց կարգախօսը կ'ընտրեն աւելի կրօնքին բանաձեւած սկզբունքներուն մէջէն, իսկ վերջինները 200 տարի ետք, նոյն սկզբունքները աւելի արդիական կերպով բանաձեւելով է որ կը կազմեն իրենց դաւանանքը:

Կտրիճները չըլլալով գինուորական ազգի մը զաւակ, հասարակական կեանքին կը գինուորագրուին, մաս կազմելով անոր բոլոր ձեւերուն մէջ, իսկ սկանուտութիւնը, ծնունդ՝ երկար պատերազմէ մը ելլող մեծ պետութեան մը, իր զաւակները կը պատրաստէ՝ զօրաւոր բարոյականի տէր բանակի մը գինուորագրութեան:

Երկուքն ալ սակայն կը ձգտին միեւնոյն նպատակին՝ նոր սերունդի փրկութիւն եւ ազնուացում:







# ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ Յ. Թ. ՀԻՆՂԼԵԱՆԻ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐԸ

**Յ**ովհաննէս Թ. Հինդլեան մարզիկ մը էր: Չեմ կարծեր որ հանրութեան այ ներկայացած ըլլայ օր մը սկաուտական համագգեստով: Չեմ յիշեր զինքը տեսած ըլլալ սկաուտական գաւազանը ձեռքը (կը նախընտրէր հովանոցը...): Մարզական կամ սկաուտական գետնի վրայ իր կատարած վարչական աշխատանքն այ թերեւս կարելի չըլլայ որակել յարատեւ եւ առաջնակարգ: Ներկայ էր 1918 Նոյեմբեր 1-ի պատմական հաւաքոյթին, ուր Գրիգոր Յակոբեան, Հայկ Ճիգմէճեան, Գարլօ Շահինեան, Լեւոն Յակոբեան, Յակոբ Ճոլոյեան (Յ. Ճ. Սիրունի), Տիգրան Խոյեան կեանք կու տային վերջապէս, արդէն տարիներէ ի վեր երկունքի մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի:

Դպրոցի տնօրէն, ուսուցիչ, հեղինակութիւն Ազգային Ուսումնական Խորհուրդին մէջ, հեղինակ դասագիրքերու, Հինդլեան իր սուղ ժամանակէն քիչը միայն կրնար տրամադրել հանրային աշխատանքի: Եւ սակայն երբ կը հակինք մեր սկաուտական շարժման օրօրոցին վրայ, առաջին համաշխարհային պատերազմէն առաջ, Յ. Թ. Հինդլեան իր գրիչով մեզի կը ներկայանայ իբրեւ առաջին մղիչ ուժը Պէյտըն Փաուըրի վարդապետութեան տարածման հայութեան մէջ, Շաւարշ Քրիսեանի հետ, նոյն մակարդակի վրայ:

## ՆՈՒՒՐԵԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿ ՄԸ

Ո՞վ էր Յովհաննէս Թ. Հինդլեան: Ծնած էր 1896-ին, Պոլիս: Իր ուսումը առած էր Սկիւտար, ԺԹ. դարու մեծարժէք ուսուցչապետ Ռեթէոս Պէրպէրեանի շունչին տակ: Պէտք է հաւատալ որ իր պաշարը մեծապէս հարստացուցած էր ինքնաշխատութեամբ, մտնելու համար դաստիարակչութեան ասպարէզին մէջ, ուր պիտի տքնէր երկար տարիներ: Յ. Թ. Հինդլեան մահացած է 16 Մարտ 1950-ին, Պոլիս:

Իր նախկին ուսուցիչներէն մէկուն, Գ. Ա. Մալաթեանի հետ, 1909-ին հիմնած էր «Նոր Դպրոց»ը, այն ատեն տղոց վարժարան մը, ուր կը կիրարկուէին ժամանակին համար յառաջդիմական, չըսելու համար յեղափոխական մեթոտներ: Իրը ըրած էր զուգահեռացի դաստիարակ Փետթալոցցիի (1746-1827) Եւրոպայի մէջ երկարօրէն վէճի առարկայ եղած գաղափարներուն մեծ մասը: Կը փորձէր իր դպրոցին մէջ հաւասար չափով կարեւորութիւն տալ թէ՛ մտաւոր, թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ բարոյական դաստիարակութեան:

Եթէ կան ընթերցողներուս մէջ նախկին «Նոր Դպրոց»ականներ, պիտի յիշեն անկասկած «Չափում»ի շարունակ արարողութիւնը, ուր Յ. Թ. Հինդլեան անձնապէս կը քննէր ու կը զննէր մեր ֆիզիքականը, վերէն վար, ինչպէս բժիշկ մը: Չափում շնչառութեան, հասակի, կշիռքի, փնտուտուք մարմնին վրայ, բնական թերութիւններու: Ու արդիւնքները կ'արձանագրուէին, եթէ լաւ կը յիշեմ տարին երկու անգամ, աշակերտին վիճակացոյցին վրայ:

Իր բարոյական դաստիարակութեան յենարանն էր վաղ առաւօտեան ընդհանուր հաւաքոյթները դպրոցին մեծագոյն սրահին մէջ, ուր քառորդ ժամ մը կամ քիչ մը աւելի, Յ. Թ. Հինդլեան կամ Գ. Ա. Մալաթեան, երբեմն երկուքը յաջորդաբար, կը խօսէին մեզի ընդհանրապէս այժմէական հարցի մը մասին, հանելով անոր մէջէն բարոյականի դաս մը:

Շաբաթը մէկ պահ «գործնական իմաստասիրութիւն»ն այ միշտ դասաւանդուած պըն. տնօրէնին կողմէ, կ'ամբողջացնէր մեզ բարոյապէս զօրաւոր ընելու իր ջանքերը: Այս էր «Նոր Դպրոց»ի մթնոլորտը, նշան թաղ, թուրք փաշայէ մը վարձուած ապարանքին մէջ, երբ բախտը ունեցայ երեք տարեշրջաններ մնալու հոն:



**ՅՕԴՈՒԱԾԱՇԱՐՔ ՄԸ՝ ՈՐ  
ԽԱՆԴԱՎԱՌԵՅ ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ**  
1908-ի սկիզբն էր որ Պէյտըն Փաուըր կը հրատարակէր իր ծրագիրը, որ ծայր պիտի տար «Պոյ Սկաուտ» խումբերու կազմութեան Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ նախ, տարածուելու համար յետոյ բոլոր երկրամասերուն վրայ:  
Քրիսեանի «Մարմնամարզ»ին մէջ առաջին ակնարկ մը արդէն 1912 Յունուարին: Յետոյ, քանի մը ամիս վերջ



միայն, 1912 Մայիսի թիւէն սկսեալ, Յ. Թ. Հինդլեան յօդուածաշարքով մը մանրամասնօրէն կը ներկայացնէ հայ հանրութեան Անգլիա ծնած այս շարժումին հուսկինն ու նպատակը: Ծօղուածաշարքը կը հրատարակուի նաեւ գրքոյկով մը: Դաստիարակը անմիջապէս ըմբռնած է նոր վարդապետութեան արժէքը տղուն բարոյական եւ ֆիզիքական զարգացման համար: Իսկ պատանիները խանդավառուած են համազգեստաւորուած խումբեր կազմելու, բանակելու հեռանկարով...

Հեռանկար՝ արդարեւ: Հինդլեան շատ խոհեմ է. կը գրէ՝ «Յիմակ ու հիմա, ես պիտի փափաքէի որ Պէյտըն Փաուըլի հիմնած սկաուտներու ակումբին նման ակումբ մը հիմնելու ետեւէն չըլլանք, այլ ձեր բարքերուն մէջ մտցնէք այդ ձեռնարկին ոգին՝ որ կը հաւատամ թէ շատ յարմար է ազնուացնելու մեր ցեղը...» («Մարմնամարզ» 1912, թիւ Մայիս-Յունիսի):

Հինդլեան շատ խոհեմ մարդ էր. կարելի է ենթադրել, կը վախճար որ այդպիսի շարժման մը ստեղծումը հայութեան մէջ, շարժում մը որ քիչ մը գինուորական բնոյթ ունէր, լաւ աչքով չնայուէր թուրք կառավարութեան կողմէ: Արդէն, անկասկած, այդ յարատեւ խոհեմութիւնն էր որ գինքը փրկեց արքային ու մահէ:

**ՍԵՐՄԸ ՆԵՏՈՒԱԾ ԷՐ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ**

Յ. Թ. Հինդլեան չուզեր ուրեմն այդ «տղայոց գումարտակները» անմիջապէս կեանքի բերել թրքահայ իրականութեան մէջ: Սակայն ինքն իսկ նետած է սերմը ընդունակ հողի մը վրայ: Գաղափարը հետզհետէ կը տարածուի, կը գրակէ



պոլսահայ երիտասարդութեան սիրտը: Մանաւանդ Սկիւտար: Հոն, արդէն նախապէս կազմուած «Հրատ» մարզական խումբին մէջ, 1913-ի սկիզբը ծնունդ կ'առնէ սկաուտական խմբակ մը: Սկիւտարի հայութիւնը միշտ նախաձեռնող եղած է: Գրեթէ միաժամանակ «Նոր Դպրոց» մը եւս մէջտեղ կը հանէ իր խումբը: Յ. Թ. Հինդլեան տեղի տուած է կ'երեւի իր աշակերտներուն խանդավառութեան առջեւ: Տեղի տուած է ուրախութեամբ:

Երկու սկաուտական խումբերը, համազգեստաւորուած, իրենց կարգապահ տողանցքով, զարդը կը կազմեն 1913-ի հայկական ողիմպիական խաղերուն, որոնք երրորդ անգամ տեղի կ'ունենային:

Այսպէս կը ծնի հայ սկաուտական շարժումը, որ սգալից խաւարումէ մը վերջ, թափ պիտի առնէր 1918-ին: Այն ատեն եւս Յովհաննէս Թ. Հինդլեան, աւելի քան երեք պատնէշին վրայ, առաջիններէն է խրախուսելու: Մղիչ ուժ, կը մասնակցի սկաուտական կեդրոնական յանձնախումբին: «Նոր Դպրոց»-ին մէջ կը քաջալերէ սկաուտական խումբերը, որոնք Արարատ Քրիսեանի (տարաբախտ Շաւարշին եղբորորդին) խմբապետութեան տակ եղան այդ շրջանի ամէնէն գնահատուած, ամէնէն աչքառու կազմակերպութիւններէն մէկը: (Այս առթիւ, որպէսզի կարծուի, թէ ինքնագոհութեան զոհ եմ, ճշդեմ որ սկաուտ եղած չեմ, ո՛չ «Նոր Դպրոց», ո՛չ ուրիշ տեղ):

Պոլսոյ մէջ հայ սկաուտական շարժումը վերջ կը գտնէր, երբ Հ.Մ.Ը.Մ. կը լուծէր իր կազմակերպութիւնը Թուրքիոյ սահմաններուն մէջ (16 Սեպտեմբեր 1922): Բայց ան գրեթէ անմիջապէս կը վերածնէր ու կը տարածուէր բոլոր այն երկիրներուն մէջ, ուր հայերը ապաստան կը գտնէին քսանական թուականներուն:







ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ Թ. ՀԻՆԳԼԵԱՆԻ ԳՐԻՉՈՎ

# «BOY SCOUT»-Ը ԵՒ ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ՆՊԱՏԱԿԸ

**Տ**ղաքս, այսօր կ'ուզեմ ձեզի խօսիլ ձեռնարկի մը մասին, որ գիտեմ թէ շատ մօտիկ է ձեր սրտին: Ձեր մէջէն շատեր չեն անգիտար թերեւս այդ ձեռնարկը, բայց գուցէ ըմբռնած, զգացած չլլան անոր ոգին, որ իր մէջ կը խտացնէ ինչ որ կարելի է երեւակայել ամէնէն աւելի առողջ եւ բեղուն՝ անհատական եւ ընկերային բարոյական տեսակէտով:

Այդ ձեռնարկին է «Boy scouts»-ը: Կ'արժէ, կամ մանաւանդ ձեր պարտականութիւնն է տոգորուիլ անոր ոգևորվել եւ ձեր բարոյց մէջ մտցնել այդ ոգին:

1911 Յուլիս 4-ին, Ուիլսոնը բարձրին մէջ Անգլիոյ ձորճ Եթագաւորը աչքէ կ'անցընէր 30,000 Boy scouts-ներ, որոնք եկած էին Մեծն Բրիտանիոյ ամէն կողմերէն եւ նոյնիսկ կայսրութեան ամէնէն հեռու տեղերէն: Հազիւ գլուխը թագ դրած, կ'ուզէր ցոյց տալ իր համակրութիւնը այդ մանկական եւ իսկատիպ գունդերուն, այն պահուն ուր իր ազգին երիտասարդ ուժերուն վիճակը կ'ուզէր գիտնալ, առանձնաշնորհեալ տեղ մը կու տար այդ տարօրինակ կազմակերպութեան, որ դեռ երէկ ծնած՝ արդէն գեղուն էր կեանքով:

Այս ձեռնարկին ծնունդ տուողը եղաւ գործարար Պէյտըն Փաուրլի գիրքը՝ «Scouting for Boys», որ հրատարակուեցաւ 1908-ի սկիզբը: Զօրավար Պէյտըն Փաուրը, Թրանսվալի պատերազմին մէջ, զարմացած էր տեսնելով որ հայրենիքը այնքան անպատրաստ էր գործելու, նկարագրի տէր մարդիկ այնքան հազուագիւտ էին, ցեղին աւանդական կորուրդը այնքան նուաղած էր, եւ կ'առաջարկէր պարզ ու ազդեցիկ դեղ մը, այն է՝ երիտասարդներուն ներշնչել սէր այն մարզանքներուն համար, որոնք այնքան տարօրինակ կերպով կը զարգացնեն նկարագրը՝ կոյս անտառի մէջ ապրող մարդոց, երկրախոյզներու, որսորդներու, ճամբայ հարթող զօրականներու: Զօրավարին գաղափարը խանդավառ ընդունելութիւն մը գտաւ երկրին ամէն կողմերը: ամէն տեղ տղաներ եւ երիտասարդներ սկստուտներ կազմեցին: ամէն կողմ գտնուեցան այս գաղափարին օգտակարութիւնը գնահատելու կարող մարդիկ՝ վարելու համար նոր գունդերը: Օրինակը տարածուեցաւ նաեւ Անգլիոյ գաղթականութիւններուն եւ օտար երկիրներուն մէջ: Մէկ տարուան մէջ 100,000 սկստու կար: 1911-ի Յուլիս ամսուն՝ կէս միլիոնէ աւելի էին անոնք: Բրիտանական ամէն գաղութի մէջ, Միացեալ Նահանգներ, Չինի, Արժանթին, Գերմանիա, Ռուսիա, Իտալիա, Հոլանտա, Յունաստան, Ճապոն, Չինաստան, քաղաքակիրթ երկիրներու մեծ մասին մէջ:

Ի՞նչ բանի մէջ կը կայանայ այս ձեռնարկին կարեւորութիւնը: Բացատրեմ ձեզի մէկ քանի բառով: Բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ բարեկեցութեան զարգացումը կը վտանգէ բարոյական հաւասարակշռութիւնը եւ քաղաքացիական արժէքը: «Գերքաղաքակիրթութիւն»ը կամքը եւ ձեռներէցութեան ոգին սկստացուեցաւ է: Մտաւորականներու եւ գիւրգիւզացներու, արուեստագէտներու եւ գիտնականներու, իլէտանդներու եւ քննադատներու սերունդներ կ'արտադրէ ան, բայց գործելու, ճշմունք, վտանգ

\*  
\* \*

Ի՞նչ բանի մէջ կը կայանայ այս ձեռնարկին կարեւորութիւնը: Բացատրեմ ձեզի մէկ քանի բառով: Բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ բարեկեցութեան զարգացումը կը վտանգէ բարոյական հաւասարակշռութիւնը եւ քաղաքացիական արժէքը: «Գերքաղաքակիրթութիւն»ը կամքը եւ ձեռներէցութեան ոգին սկստացուեցաւ է: Մտաւորականներու եւ գիւրգիւզացներու, արուեստագէտներու եւ գիտնականներու, իլէտանդներու եւ քննադատներու սերունդներ կ'արտադրէ ան, բայց գործելու, ճշմունք, վտանգ

զը դիմագրաւելու եռանդը երթալով կը պահսի, կորուրդը, նկարագրը կը փճանայ: հանրակառքերը, ինքնաշարժ կառքերը կը մեղկացնեն, ֆուլթպոլի մրցումները, սինեմաները եւ ուրիշ այս կարգի բաներ պանդոյրներու ժողովուրդ մը կ'ընեն մեզ: Աւելի կը սիրենք ուրիշներուն գործերը դիտել՝ քան թէ գործել, աւելի կը սիրենք վայելել՝ քան ստեղծել: անդամալուծութեան կարապետ թմրութիւնը կը ճարակի ազգերուն մէջ:

Արդ, այն բարեմասնութիւնները որոնք մեզ կը թողուն հետզհետէ՝ կը գտնուին տակաւին տեղ մը: այն ճամբորդները եւ գաղթականները որոնք Ափրիկէի խորը եւ ամերիկեան անտառին մէջ ամէն օր կը մաքառին մարդոց եւ իրերու թշնամութեան դէմ՝ մեծ չափով ունին այդ բարեմասնութիւնները: Վայրենի կեանքը այն դպրոցն է, որ մեզ պիտի սորվեցնէ մեր մեղակացած կորուրդները նորէն զօրացնելու միջոցը: Այդ կեանքին մէջ ստիպուած ես, ուզես չուզես, մա'րդ ըլլալու եւ ո'չ ոչխար, քայլ առ քայլ նուաճելու թշնամի ընտելութիւնը, եւ եթէ ուզես յաջողիլ՝ կը յաջողիս բռնի, տիրաբար: Զեռներէց, յանդուգն, արի, հնարքներու առատ պաշարով զինուած, այդ մարդիկ վայրկեան մը չեն դադրիլ նուաճելէ այն միջավայրը, որ իրենց կը սպառնայ միշտ: չարքաչ են եւ ժուժկալ: տէր իրենց կամքին, տէր իրենց ամէն մէկ դնդերին: կարգապահութեան եւ անձնագոհութեան ոգի ունին, ունին ուժովնեւրուն վեհանձնութիւնը, ունին գուրբութիւնը անոնց՝ որ բանէ մը չեն վախնար: Աւնութեան եւ նկարագրի կատարեալ տիպարներ են:

Ինչ-ինչ վայրենի ժողովուրդներ մեզմէ աւելի աղէկ գիտեն այս գործուն բարեմասնութեանց արժէքը եւ կը ջանան գանոնք զարգացնել իրենց զաւակներուն մէջ: Զուլունները հետեւեալ եղանակը կը գործածեն: Երբ պատանի մը մարդու կարգ անցնիլ կը փափաքի, քաղաքակիրթ մարդոց պէս չ'ընեն, որոնք կը սկսին գլանիկ ծխել: ան՝ պէտք է ցոյց տայ թէ ինչ կարող է ընել: Զայն կը հանուեցնեն, ամբողջ մարմինը սպիտակ կը ներկեն, վահան մը եւ նիզակ մը կու տան ձեռքը, գիւղէն դուրս կը տանին, յետոյ կ'ըսեն իրեն որ ինքն իր գլխուն ճարը նայի՝ մինչեւ որ մարմնոյն վրայի ներկը անհետանայ: Մէկ երկու ամիսի կը կարօտի այս գործը: Մինչեւ այն ատեն, պէտք է զգուշանայ երեւելէ, որովհետեւ եթէ տեսնուի՝ կը սպաննեն

զինք: Ինքզինքը պիտի պաշտպանէ վայրի զազաններուն դէմ, իր սնունդը պիտի ճարէ, նիզակովը կամ ծուղակներու միջոցաւ, հագուստ պիտի ճարէ, ապաստարան պիտի գտնէ, կրակ պիտի շինէ...: Երբ ներկը երթայ, կրնայ տուն վերադառնալ: Եթէ տակաւին ողջ մնացած է: Այն ատեն ցնծութեան մեծ նշաններով կ'ընդունուի եւ պատերազմիկներու շարքին կը դասուի: Ինքը ապացոյցը տուաւ թէ կրնայ ինքզինքը հոգալ:

Արդ, scouting-ը քաղաքակիրթ երկիրներու համար նմանութիւնն է վայրենի երկիրներու մէջ frontiersmen-ներու կեանքին, ապրելակերպերուն: Պոյ սկստանները պիտի գիտնան անտառին մէջ բնակիլ ատեն մը, ապաստանարան եւ հիւղ շինել, իրենց կրակը պատրաստել, իրենց կերակուրը եփել, աստղերուն առաջնորդութեամբ ճամբորդել, գննել, իրենք իրենցմէ գտնել, իրենց մատները գործածել, մէկ բառով անհատականութեան հական տարրերը զարգացնել իրենց մէջ անզգայաբար եւ հրապուրիչ ճամբաներով: Բացօթեայ կեանք, առողջապահութեան ուշադրութիւն, ընտրուած խաղեր եւ մարզանքներ, մէկ քանի ձեռագլին աշխատանքներ անոնց պիտի հայթայթեն ֆիզիքական օգտակար ձեւը: ուժով, դիւրաթեք, չարքաչ պիտի ըլլան: իրենց մարմնոյն մէջ պիտի ունենան ապահով գործիք մը, որ միշտ պատրաստ է իրենց ծառայելու ի հարկին: Զննելու, հետեւութիւններ հանելու, կապակցելու, առօրեայ կեանքին գործնական հարցերը իրենք իրենցմէ լուծելու վարժութիւնը շատ օգտակար պիտի ըլլայ իրենց՝ իմացական մշակման տեսակէտով: Եւ ապագային, երբ աւելի բարդ եւ տարբեր տեսակ ուրիշ հարցերու դէմը գտնուին, յանկարծակիի պիտի չգան: Ֆիզիքական առողջ գործունէութիւն մը, ուր ճիգը հաճելի է բայց երբեք՝ ծայրայեղ, ուր ամէն յոգնութիւն կը վայելէ շօշափելի արդիւնք, բարի եւ գուրբ ընկերներու հետ շփում, յարգուած մարդոց թելադրութիւնները եւ շարունակ օրինակը, այս ամէնը անոնց մէջ պիտի նպաստաւորէ եւ վառ պահէ գործունէութեան համար կարեւոր եղող առաքինութիւնները, այսինքն՝ կտրուկ ըլլալ, արի ըլլալ, անձնավստահ ըլլալ, լաւատես ըլլալ, աշխոյժ ըլլալ: պատրաստ պիտի ըլլան՝ մաքառելու եւ յաջողելու համար:



«Պատրաստ» ըլլալ, ա՛յս է պոյ սկաուտի նշանաբանը եւ բոլոր իր ճիգերուն նպատակը: Ոչ երկրախոյզի, ոչ ալ որսորդի աշակերտութիւնը կ'ընէ պոյ սկաուտը, կամ գոնէ ատ չէ scouting-ի բուն նպատակը: Բուն նպատակն է քաղաքացիի առօրեայ կեանքին եւ սովորական պարտականութեանց մարզուիլ:

Իբր քաղաքացի, ուշ կամ կանուխ պէտք պիտի ունենայ հաշտուելու սազադափարին հետ, թէ ընկերութեան մէջ իր գրաւած տեղը կը կապէ, կը ստորադասէ կամ կերպով մը կը մերկացնէ զինքը իր անձնականութենէն. արդ, պոյ սկաուտը կը սորվի կարգապահ ըլլալ խաղի մէջ, իրեն վիճակուած պաշտօնը ընդունիլ առանց միտքէն անցնելու թէ աւելի աղէկ չէ՞ր ըլլար որ ուրիշ դեր մը կատարէր եւ իր պաշտօնին մէջ կարելի եղածին չափ շատ օգտակար ըլլալ ջանալ: Դարձեալ, իբր քաղաքացի, պէտք պիտի ունենայ անշուշտ անձնուրութեան գործեր կատարելու, ծառայութիւն մատուցանելու, իր մասնաւոր շահը գոհելու ընդհանուրին շահին, թերեւս իր կեանքը վտանգի ենթարկելու. պոյ սկաուտը կը սորվի այս բաները, «կը պատրաստուի» ոչ միայն ինքզինքին, այլ նաեւ՝ ուրիշին համար, եւ Ֆիզիքական մարզանքը անգամ բարոյական նպատակ մը ունի: Ու այս՝ ձեռնարկին հակառակ կողմն է: Պոյ սկաուտները, նոր թափառական ասպետներ, հոս հոն կ'երթան փնտռելու համար, թէ ո՛ւր կայ մատուցանելիք ծառայութիւն մը, կատարելիք բարի գործ մը, ձեռնտուութիւն մը, ազատութիւն մը: Արահետներու մէջէն քալեն թէ անտառներու մէջ գիշերեն կամ իրենց ազմկալից խաղերուն անձնատուր եղած ըլլան, երբեք չեն մոռնար անձնուրութեան իրենց «օրէնքը» եւ իրենց «խոստումները»: Յօժարափոյթ, ծառայող, բարի՝ նոյնիսկ անասուններու հանդէպ, ամէն առթիւ «ամէն մարդու պատիկ բարեկամները» ցոյց կուտան ինքզինքին:



իր պետը եւ երկրորդ պետը, 3-4 պահակախումբերու ակումբը կը կազմէ գունդ մը, scoutmaster-ի մը եւ մէկ երկու scoutmaster-ներու հրամանատարութեամբ: Գունդը, scoutmaster-ի ձեռքին տակ, հիմնական միութիւնն է, գործող տարրը, ամէն սկաուտ կեանքի վառարանը: Scoutmaster-ը ասագին գործ ունի կատարելիք. պէտք է հրահանգէ եւ մարզէ իր գունդը, անոր հա-

ղորդէ սկաուտական գիտութիւնը, (որ, իրապէս տիեզերական է, կ'ընդգրկէ արտերը եւ անտառները, անասունները եւ մարդիկը, երկիրը եւ երկինքը), անոր ներշնչէ սկաուտի բուն ոգին, շահագրգռէ եւ միշտ եռանդուն պահէ՝ յաճախ դժուարամատչելի սկաուտական գիտութիւնը, պէտք է հոգայ ժողովատեղին (սովորաբար խանութ մը, շտեմարան մը կամ աշխատանոց մը՝ որ ազնուաբար փոխ տրուած է համակիր անձի մը կողմէ), պէտք է ստակ ճարէ, որովհետեւ խումբերուն դրամական անկախութիւնը բացարձակ սկզբունք մըն է, ամէն գունդ պէտք է ինքը գոցէ իր պիւտձէն՝ առանց մուրացկանութեան դիմելու, տղաք պէտք է հոգան գործին ապրուստը (եթէ կ'ուզեն, այս բանին համար, կրնան շրջանակ շինել, մեղու բուծանել, աթոռ, թռչունի վանդակ շինել): Գործին ճակատագիրը՝ scoutmaster-ին ձեռքն է. իր գունդը պիտի ըլլայ այն՝ ինչ որ ըրած են զինքը անոր անձնուրութիւնը, գործունէութիւնը, ձեռնհասութիւնը եւ օրինակը: Տնօրէն խորհուրդին կողմէ կարգուած տեսուչներ աչքէ կ'անցնեն գունդերը եւ միւս խմբակցութիւնները, եւ իրաւունք ունին ուղղելու, քննադատելու, ազդարարելու, օգտակար հրահանգներ տալու:

Պոյ սկաուտ ըլլալու համար պէտք է 11-18 տարեկան ըլլալ եւ իր ծնողքէն արտօնուած ըլլալ: Սկաուտ եղբայրակցութիւնը դասակարգային զանազանութիւններ չի ճանչնար: Պոյ սկաուտ ըլլալ փափաքող տղայ մը իր մէկ բարեկամին միջոցաւ կ'երթայ ժողովատեղին: Սրահը հաճոյատեսիլ է: Հոն կան մէկ քանի մարմնամարզական գործիքներ, barre fixe մը, կռիւմարտի ձեռնոցներ, փորձասուրբ. սեղանի մը վրայ, պաշտօնաթուղթեր, սկաուտական լրագիրներ եւ դասագիրքը. հոս պահակախումբ մը կը մարզուի կապ շինելու. հոն, մէկ քանի սկաուտներ կը խաղան խաղ մը, որ կը թուի շատ շահագրգռել զանոնք: Բոլոր կահ կարասին (սեղանները, նստարանները եւ մարմնամարզական գործիքները) սրահին կից արուեստանոցէն ելած է: Նոր ընկերոջ բարի գալուստ կը մաղթեն սրտագին, եւ անմիջապէս կը սկսին խելամուտ

**Բ.**

Պոյ սկաուտներու կազմակերպութիւնը շատ պարզ է: Գլուխը կը գտնուի «Տնօրէն խորհուրդ» մը, որուն նախագահն է Սրբ Պէյտրն Փաուրը, սկաուտներու պետը: Տնօրէն խորհուրդը կը բաղկանայ գործին համակիր քաղաքագէտներէ, եկեղեցականներէ, զինուորականներէ, մանկավարժներէ: Տնօրէն խորհուրդը ունի իր ստորադաս խորհուրդները, որոնց մէջ բաժնուած է իրական պատասխանատուութիւնը: 6-8 տղայոց ակումբ մը կը կազմէ «պահակ խումբը», որ ունի



ընել գինքը գործին: Կարգ մը բաներ կան, գորս պէտք է սորվի նախապէս, որպէսզի կարենայ անդամ գրուիլ: Պէտք է գիտնայ սկաուտութեան օրէնքը, սկաուտութեան նշանները եւ սկաուտական բարեւը: Պէտք է գիտնայ թէ ի՞նչպէս կազմուած է Union Jack-ը եւ գայն պատշաճօրէն ծածանեցնելու կերպը: Վերջապէս, պէտք է կարենայ մէկ քանի սովորական կապեր շինել: Որովհետեւ թեկնածուն ապուշ չէ, մէկ երկու ժամէն կը սորվի այս ամէնը:

Գործին անկիւնաքարը, անոր ամրութեան լաւագոյն երաշխիքն է՝ սկաուտական օրէնքը: Այս տասը պատիկ կանոնները, գորս սկաուտին պետք յարմար դատած է մտցնել նիւթական կարգ ու սարքին մէջ՝ ամէն օր կ'ապացուցանեն իրենց հրաշալի արդիւնաւորութիւնը: Պատուոյ կրօնք մըն է ամբողջութիւնը այս կանոններուն. նոր ասպետութեան մը օրինագիրն է ան. սկաուտական մեծ բանակին համար դրօշակ մըն է. ան՝ գոր չեն լքեր: Ահաւասիկ այդ տասը յօդուածները:


1. Սկաուտի մը խօսքը նուիրական է:
2. Սկաուտ մը ուղղամիտ է:
3. Սկաուտի մը պարտականութիւնն է օգտակար ըլլալ եւ օգնել ուրիշին:
4. Սկաուտ մը բարեկամն է ամէնուն եւ եղբայրը ամէն ուրիշ սկաուտի:
5. Սկաուտ մը կենցաղագէտ է:
6. Սկաուտ մը բարեկամն է անասուններուն:
7. Սկաուտ մը գիտէ հնազանդիլ:

8. Սկաուտ մը կը ժպտի եւ երգ կը սուլի:
9. Սկաուտ մը խնայասէր է:
10. Սկաուտ մը մաքուր է մտածումով, խօսքով եւ գործքով:

Տասը պատուիրանք, բայց որոնց մէկը, «օգնել ուրիշին», մասնաւոր վեհութիւն մը ունի: Սկաուտ մը ուրիշ տղաներէ կը զանազանուի անով որ ուրիշին հոգ կը տանի, յօժարափոյթ ծառայութիւն կը մատուցանէ, կ'օգնէ անոնց որ վտանգի մէջ են կամ վիրաւոր: Պարտաւոր է ձեռքէն եկածը ընել՝ ամէն օր բարի գործ մը կատարելու համար: Եւ սկաուտները ամէն օր բարի գործ մը կը կատարեն: Մէկը սովորականէն կանուխ կ'ելլէ մօրը օգնելու համար. ուրիշ մը ամէն առաւօտ պառաւ դրացուհւոյ մը փայտը կը կտրէ. երրորդ մը, որ երեկոյին տուն վերադարձած է առանց օրական բարի գործը կատարած ըլլալու, սկաուտի համագգեստը կը հագնի եւ իր պատիկ եղբօրը առջեւ զօրահանդէս կ'ընէ՝ գայն գուարճացրնելու համար...:

\*  
\* \*

Սկաուտներու իւրաքանչիւր պահակախումբ անասունի մը անունը կը կրէ եւ այդ անասունին ձայնը կը հանէ: Այդ կերպով պահակախումբի մը սկաուտները կրնան միշտ հաղորդակցիլ, նոյնիսկ գիշերանց, նոյնիսկ դարանուած միջոցին: Պահակախումբին պետք իր գաւազանին ծայրը պատիկ ճերմակ նիզակադրօշ մը ունի պահակախումբին անասունին



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)

Reservations

Studio KEN 2005 PARIS



գլուխով՝ կարմիր կերպասի վրայ: Երբ սկսում էր նշան մը կ'ընէ որ ուրիշ սկսուածներու սահմանուած է, իր պահակախումբին անասունին գլուխը կը գծէ եւ որովհետեւ իւրաքանչիւր ըսկաուտ իր թիւը ունի պահակախումբին մէջ, իր թիւը կ'աւելցնէ. անոնք որ նշանը գտնեն՝ գիտեն թէ որմէ՛ կուգայ:

Սկսուտական բարեւը կը տրուի՝ աջ ձեռքը ուսին բարձրութեան տանելով, ափը առաջ, բթամատը պզտիկ մատին եղունգին վրայ դնելով, միւս երեք մատները ուղղաձիգ:

Ասոնք են այն նախնական ծանօթութիւնները՝ անհրաժեշտ անոնց որ կ'ուզեն ընդունուիլ սկսուտական մեծ եղբայրակցութեան մէջ: Թեկնածուն, ասոնք գիտնալէ վերջ, որոշեալ օրը կը ներկայանայ՝ սկսուտական խոստումը ընելու համար: Այս խոստումը վսեմ գործ մըն է. պատուոյ խոստում մըն է ան:

«Պատուոյս վրայ կը խոստանամ թէ ձեռքէս եկածը պիտի ընեմ կատարելու համար իմ պարտականութիւնս առ Աստուած եւ առ Թագաւորն-օգնելու համար ուրիշին - հնազանդելու համար սկսուտութեան օրէնքին»:

Այս խօսքերը արտասանած ատեն, բարեւի դիրքով կը կենայ, աջ ձեռքին երեք մատները բարձրացուցած՝ ի նշան երեք խոստումներուն: Այդ վայրկեանէն պահակախումբին մէջ մտած է, բայց իբրեւ նորընծայ, իբր «կապոյտ», իբր «tenderfoot»: Իրաւունք ունի սկսուտական պատուանշանը դնելու իր առօրեայ վեսդոնին լամբակին վրայ եւ համազգեստ կրելու: Համազգեստը կը բաղկանայ՝ 1. Շականակագոյն թաղիքէ լայնեզր գլխանոց մը, որ նուրբ կզակակապով մը հաստատուած է: 2. Թուխ, կանաչ, կապոյտ կամ հողի գոյնէ kaki ֆանելայէ, եւ սեռժէ պլուզէ: 3. Սաստիկ գոյներով ֆուլթայ մը վիզին շուրջը կապուած: 4. Կապոյտ կարճ տաբատէ մը, որ մինչեւ ծունկին վրայ կ'իջնէ եւ հաստատուած է մետաղեայ օղակով կաշիէ գօտիով մը: 5. Բուրդէ գուլպաներէ, որոնք մինչեւ ծունկը չեն ելլեր բոլորովին. գուլպաները բանուած են հիւսուածոյ ծնկակապով մը, որոնց ծայրերը սիրուն կերպով վար ինկած են: 6. Պարկէ մը, կունակին վրայ: 7. Ուսին վրայ՝ ժապաւէններով կապէ մը, պահակախումբին գոյներով: 8. Վերջապէս, գաւազանէ մը, հացիէ ճապուկ եւ ուժեղ գաւազան, որոյ վրայ բթաչափեր եւ ոտնաչափեր նշանակուած են եւ որոյ շնորհիւ կարելի է գիշերը ապահով կերպով քայլել եւ առուակներէ անցնիլ: Թողունք որ գաւազանը ուրիշ անհամար գործածութիւններ ունի, պարագային պահանջման համեմատ (դրօշակի կոթ, երկայնութիւնները չափել, պատգարակ, վրանի կազմած եւ այլն):

«Tenderfoot»ի շրջանն է մէկ ամիս: Այս մէկ ամսուան



ծրագիրը շատ բան կը պարունակէ: Պէտք է գիտնայ նախնական խնամքները տալ վիրաւորի մը, վէրք մը կապել, ջուրը ինկած մէկը կենդանացնել, պատգարակ մը շինել ավյափոյ: Պէտք է բաւական վարժութիւն ունենայ թեւով նշան ընելու եւ Մօրս հեռագիրը գործածելու: Սուր դիտողութիւն կը պահանջուի իրմէ եւ այս մասին հետեւեալ երկու փորձերէն մէկուն կ'ենթարկեն գինքը. գիւղը, կէս մղոն երկայնութեան վրայ հետքի մը հետեւիլ՝ առ

առաւելն 25 վայրկեանի մէջ. քաղաքը, խնամով դիտել վաճառատան չորս ապակափեղկեր, յետոյ գոհացուցիչ կերպով նկարագրել անոնցմէ մէկուն պարունակութիւնը: «Tenderfoot»ը կը սորվի կրակ վառել բաց օդի մէջ, կրակ մը գոր ինքը պատրաստած է, առանց երկուքէ աւելի լուցկի գործածելու. սկսուտի գնացքով երթալ, այսինքն՝ մէկ մղոն տեղ երթալ 42 վայրկեանի մէջ՝ յիսուն եարտա [45.72 մեթր - «Մ.»] քայլով եւ վազելով փոխն ի փոխ. մէկ քառորդ միս եւ երկու գետնախնձոր եփել կանոնական ամանէն գատ անօթ չգործածելով: Քանզի սկսուտ մը խնայասէր պէտք է ըլլայ, առնուազն 6 բէնս պէտք է ունենայ խնայողութեան սնտուկը: Պէտք է նաեւ կողմնացոյց գործածել գիտնայ:

Պէտք է տակաւին շատ ուրիշ բաներ սորվի, ամէնքն ալ իրարմէ հրապուրիչ, բայց որոց ամէնէն գեղեցիկներն են սկսուտներու «Պատերազմական պարը» եւ «Պատերազմական երգը»: Պատերազմի երգը կ'երգեն քայլելու ատեն, իսպի մէջ, ժողովի մէջ:

Ահաւասիկ այդ երգին բառերը.  
Առաջնորդ. էէն կոնեա՛ մա-կոնեա՛ մա  
(Առիւծ մըն է)

Խոււմբ.- էնվօօպօօ  
Եահ պօ՛ ! Եահ պօ՛:  
էնվօօպօօ  
(Ոչ, առիւծէ աւելի բան մըն է.  
գետածի մըն է):

Պատերազմական պարին մէջ, սկսուտներուն շրջանակը, երբեմն լայննալով, երբեմն սեղմուելով, հանդարտաքայլ երթալով կամ պտուտկելով, ոստելով կամ կծկտած, էնկոնեամայի շեշտերով կը հետեւի պետին բոլոր շարժումներուն, որ, շրջանակին մէջտեղը, վայրի գոմէշի մը հետ պատերազմի մը փուլերը կը ձեւացնէ, սկսեալ այն վայրկեանէն, ուր անոր հետքը գտած է՝ մինչեւ գայն սպանելու պահը. եւ այս միջոցին, երգը, նախ ցած, հետգհետէ յամր, խորհրդաւոր, աշխոյժ, սպառնական, սոսկալի, կատաղի կը դառնայ:

«Tenderfoot»ը, մէկ ամիսէն վերջ, եթէ պահանջուած պայմանները լրացնէ, Բ. կարգի սկսուտի պատուանշանը կ'ըն-



դունի: Այդ վայրկեանէն անդուլ անդադար կ'աշխատի Ա. կարգի սկաուտ դառնալու: Ա. կարգի սկաուտը գիտէ լողալ: Առնուազն մէկ շիլին ունի խնայողութեան սնտուկը: Կրնայ գործածել Մօրս հեռագիրը կամ թելի հեռագիրը մէկ վայրկեանի մէջ 16 տառի արագութեամբ: Ճշգիւ գիտէ թէ ինչ պիտի ընէ թեթեւ կամ ծանր արկածի մը, աղէտի մը պահուն, շուարած ամբոխի մը մէջտեղ, երբ իր շուրջը ամէն մարդ անգործ կը մնայ: հրդեհի մը, խենթեցած ձիու մը, խեղդուող մէկու մը պարագային, գիտէ ինչ է ընելիքը: Գիտէ ապուր շինել եւ ուրիշ մէկ քանի պարզ կերակուրներ պատրաստել, ճագար մը մաքրել եւ եփել, թռչուն մը փետտել եւ խորովել: Կարող է անսխալ կարդալ քարտէս մը, հասկնալի կերպով գծել յատակագիծ մը, անմիջապէս եւ առանց կողմնացոյցի ցոյց տալ որեւէ ուղղութիւն, ծառ մը տապալել, տախտակ մը յղկել, հեռաւորութիւն մը, բարձրութիւն մը, քառակուսի երես մը, խումբի մը թուական ուժը չափել՝ 2500-է վար սխալումով մը: Վերջապէս կրցած է հրահանգել նորընծայ մը, որուն սորվեցուցած է այն ամէն բան որ կը պահանջուի «tenderfoot» է մը:


Երբ Ա. դասը կը հասնի, սկաուտը պարտաւոր չէ հանգչելու, շատ կերպերով կրնայ բարձրանալ տակաւին: Ամէնէն պատուաբեր եւ նախանձը շարժող տիտղոսներէն մէկն է «Թագաւորին սկաուտ»ը տիտղոսը: Այս տիտղոսը կը շնորհուի Ա. դասու այն սկաուտին, որ յետ քննութեան, առաջնորդի տիտղոսին եւ հետեւեալ տիտղոսներէն երեքին արժանացած է.՝ վիրադարման, սրափողար, սիբլիստ, հրացանաձիգ, նաւաստի, հեռագրող. այս տիտղոսներէն իւրաքանչիւրին կապ-

ուած է մասնաւոր պատուանշան մը, թեզանիքին վրայ կարուած. թագաւորին սկաուտի պատուանշանը միւս չորս մասնաւոր պատուանշաններուն վրայ կը կրեն: Բացի այն քննութիւններէն, որոնք թագաւորին սկաուտը տիտղոսին կ'արժանացնեն, կան բազմաթիւ նմանօրինակ քննութիւններ, բայց որոնց կրնան մասնակցիլ Բ. կարգի սկաուտներն ալ. այս վերջիններուն համար «արհեստական ձեռնհասութեան պատուանշաններ» կան: Այս կերպով սկաուտները իրենց պարապոյ ժամերուն կը սորվին կահագործութեան, փայտահատութեան, սալագործութեան, կօշկակարութեան, պարտիզպանութեան, եւ այլնի տարերքը:

Սկաուտեան խաղերուն մէջէն յիշենք «հեռագիր տանող»ի խաղը:

Սկաուտը պէտք է հեռագիրը հասցնէ որոշեալ տեղ մը, յետոյ իր թաղը մտնէ. միւսները, որոնք թշնամին կը ներկայացրնեն, պէտք է արգելք ըլլան անոր. թղթատարը իրաւունք ունի ի գործ դնելու ամէն տեսակ խորամանկութիւն: - Ուրիշ խաղ մը: Սկաուտի մը աչքերը կը կապեն եւ կը տանին 4-5 մղոն հեռու տեղ մը. անոր կու տան կողմնացոյց մը եւ քարտէս մը, եւ պէտք է որ առանձին վերադառնայ իր տեղը: - Ուրիշ խաղ մը: Սկաուտ-մասթրը կը պահէ թաշկինակ մը, որ մարգագետնին մէջէն eucalyptas-ի հոտով թաթաւուած է, եւ սկաուտները պէտք է գտնեն զայն:

Քաղեց՝ Յ. Թ. ԳԻՆԴԵԱՆ



*Elegance Plus*

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon  
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556  
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812  
E-mail: hratch@goldenmountains.com  
hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**





Եռագոյնը՝ Համաշխարհային սկաուտական 21-րդ ծամպորիին:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՉՐԸ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ Թ. ՀԻՆԴԼԵԱՆԻ ԳՐԻՉՈՎ

# ՀԱՅ ՊՈՅ ՍԿԱՌԻՏՆԵՐ

Աշխարհ արիներուն եւ բարիներուն է

ձեռնարկ մը որ օգտակար է այս ինչ միջավայրի մէջ՝ կրնայ անօգուտ եւ նոյնիսկ վնասակար ըլլալ ուրիշ միջավայրի մը մէջ: Իմաստուն մարդը ան է որ օգտակար ձեռնարկի մը գաղափարը կ'առնէ եւ զայն կը պատշաճեցնէ իր միջավայրին: Ո՛վ գիտէ մինչեւ այսօր որքա՛ն վնասներ կրած ենք՝ միշտ նկատի առած չըլլալնուս համար յարաբերականութեան այս սկզբունքը:

Հետեւաբար, հիմակուհիմա, ես պիտի փափաքէի, պատիկ բարեկամներս, որ ոչ թէ Պէյտրն Փաուըլ զօրավարին հիմնած պոյ սկաուտներու ակումբին նման պոյ սկաուտներու ակումբ մը հիմնելու ետեւէ ըլլաք, այլ ձեր բարքերուն մէջ մտցնէք այդ ձեռնարկին ոգին, որ կը հաւատամ թէ շատ յարմար է ազնուացնելու մեր ցեղը, եւ գիտէք թէ մեր ցեղը որքա՛ն պէտք ունի ազնուանալու: Այդ բանը ընելով՝ ամէնէն արդարակշիռ ազգասիրութեան գործը կատարած պիտի ըլլաք:

Ես պիտի փափաքէի մանաւանդ որ յարդի կրակի մը չի նմաներ ձեր խանդավառութիւնը, ինչպէս կը պատահի յաճախ, հապա՛ ժամանակ տայիք ձեր խանդավառութեան առաջին խօլ թափերուն քիչ մը պաղիլ, հանդարտօրէն տեսնէիք ձեռնարկին գեղեցկութիւնը եւ օգտակարութիւնը՝ այնպէս ինչպէս որ է իրօք, ուժով տոգորուէիք անով, ձեր մարմնոյն բջիջներուն, ձեր էութեան մէջ մտցնէիք զայն: Ձեր տարիքին մէջ այս պայմանով ստացուած վարժութիւն մը՝ ամէն հաւանականութիւն կայ, որ տեւէ ձեր բովանդակ կեանքին չափ:

Հիմա ըսեմ ձեզ թէ ինչ կերպով կրնաք եւ ո՛րքան դիւրին է պոյ սկաուտի ոգին մտցնել ձեր առօրեայ կեանքին, ձեր բարքերուն մէջ:

**Ա.- ՊՈՅ ՍԿԱՌԻՏ ՄԸ ՖԻԶԻՔԱԿԱՆ**

**ԶԱՐՔԱՇՈՒԹԵԱՆ ԿԸ ՎԱՐԺԵՑՆԷ ԻՆՔՉԻՆՔ**

Պատիկ հայորդի, կ'ուզե՞ս դուն ալ Պէյտրն Փաուըլի ձեռնարկին, ոգւոյն հետեւող մը ըլլալ: Ամառ թէ ձմեռ, ամէն առաւօտ լուացուէ պաղ ջուրով, եթէ ոչ ամբողջ մարմնով՝ ինչ որ լաւագոյն բանը պիտի ըլլար - գոնէ, բացի երեսէդ, ոտքերդ եւ մինչեւ ուսերդ, ինչպէս նաեւ մարմնոյդ այն մասերը,

**Պ**ատիկ բարեկամներս, հիմա որ գաղափար մը ունիք պոյ սկաուտներու մասին, ըսէք ինծի թէ ինչ կերպով պիտի կարենաք օգտուիլ Պէյտրն Փաուըլ զօրավարին պատուական ձեռնարկէն: Գիտեմ թէ դուք խօլ խանդավառութեան հասակին մէջ էք, շուտով կը տարուիք այն գաղափարներէն եւ ձեռնարկներէն, որոնք աղէկ կը պատշաճին իր շուրջը դժուարութիւն, արկած, վտանգ փնտռող համակ գործունէութիւն ձեր տարիքին. գիտեմ թէ ջերմապէս պիտի փափաքէիք դուք ալ հիմնել հայ պոյ սկաուտներու ակումբ մը, դուք որ մէկ դպրոցի մէջ հինգ վեց մարմնամարզական ակումբներ կը կազմէք:

Սակայն, պատիկ բարեկամներս, ինծի այնպէս կը թուի թէ պոյ սկաուտներու ակումբ մը, յար եւ նման անոր, զոր հիմնած է զօրավար Պէյտրն Փաուըլ եւ որ անշուշտ ո՛չ վերջնական, ոչ ալ տիեզերական ձեւն է ձեռնարկին, քիչ մը չափազանց յանդուգն բան մըն է տակաւին մեզի համար, եւ անոր կազմակերպութիւնը ձեզ ծանօթացնելով բնաւ նպատակ չունէի նմանօրինակ կազմակերպութեամբ պոյ սկաուտներու ակումբներ հիմնելու գաղափարը ներշնչել ձեզի: Աշխարհի մէջ շատ գեղեցիկ ձեռնարկներ, հաստատութիւններ կան, բայց յարաբերականութեան օրէնք մըն ալ կայ՝ ըստ որում





ուր մորթը ծալքեր կը կազմէ: Ամէն առաւօտ կատարէ քիչ մը շուէտական մարզանք՝ բաց օդի մէջ, մասնաւորապէս շնչառական մարզանք:

Պառկէ կարծր անկողնոյ մէջ, վերմակներով մի ծանրաբեռներ ինքզինքդ, եւ թեւերդ դուրս ձգէ վերմակէդ: Վարժուէ որեւէ դիրքով եւ որեւէ ժամու քնանալու: Արթննալուդ պէս՝ անկողինէդ ել:

Հագուստներով մի ծանրաբեռներ ինքզինքդ. թեթեւ հագուէ: Երբ ինքզինքդ ցուրտի կը վարժեցնես, հարբուխը կը վախնայ քեզմէ:

Ամէն օր, ամառ թէ ձմեռ, քեզի համար սկզբունք րդէ քալել մաքուր օդի մէջ. քալելը մարզանքներուն լաւագոյնն է: Վազելը եւ պարելն ալ քալելու տարբեր ձեւերն են, հետեւաբար օգտակար, անոնք ալ պայմանաւ որ կատարուին բաց օդին մէջ եւ չափաւորութեան սահմաններէն անդին չանցնին:

Ժուժկալ եղիր, ախորժակով կեր, բայց չափազանց մի՛ ուտեր: Կերակուրներու տեսակի մասին դժուարահաճ մի՛ ըլլար, վարժուէ՛ ամէնէն պարզ ճաշերուն, որոնք գիտցիր թէ ամէնէն նուազ սննդարարները չեն:

Պզտիկ հիւանդութիւններու կարեւորութիւն մի՛ տար: Ինքզինքդ մտիկ մի՛ ըներ:

Ոգելից ըմպելիք մի գործածեր. երզում ըրէ՛, պատուոյդ վրայ խոստացիր ոչ ոգելից ըմպելիք գործածել եւ ոչ ծխել՝ մինչեւ կեանքիդ վերջը:

Մննդական գործարաններուդ հետ մի՛ խաղար. անգամ մըն ալ կարդա՛ այս նիւթին նուիրուած յօդուածներու շարքը, որ հրատարակուեցաւ այս էջերուն մէջ՝ կարդա՛ նաեւ «Ինչ պէտք է գիտնայ դեռատի մանչ մը», քեզի համար անհրաժեշտ գիրքը:

Երզում ըրէ, պատուոյդ վրայ խոստացիր, երիտասարդ հայորդի, սեռային յարաբերութիւններ չունենալ մինչեւ ամուսնութեանդ օրը, կոյս մարմինդ նուիրել անոր՝ որմէ կուսութիւն կը պահանջես:

Առողջ մարդը ան չէ, որուն ղնդերները ուժով են, առողջ մարդը ան է՝ որուն ուղեղը առողջ է: Իրաւ է որ ուղեղիդ

առողջութիւնը քեզմէ կախում չունի, քանի որ ունեցած ուղեղդ ան է՝ զոր ծնողքդ տուած են քեզ, բայց գիտցիր թէ բացարձակ բան մը չէ ան եւ թէ կրնաս, մինչեւ աստիճան մը, վերաշինել, փոխել ուղեղդ: Կարելի է ըսել թէ առողջութիւնը ամէնէն ուժովին իրաւունքը չէ, այլ ամէնէն իմաստունին մրցանակը, ըսած է տոքթ. Ռիան: Այս նպատակաւ, հոգ տար ջիղերուդ հրամայելու, ջիղերուդ տէրը ըլլալու եւ թոյլ չտալու որ ջիղերդ քու տէրդ ըլլան ու դուն՝ անոնց գերին: Անտարբեր, անզգայ, մեղկ, թուլամորթ մի՛ ըլլար, բայց հանդարտ եղիր քու ցաւերուդ մէջ, մի՛ ցուցադրեր ցաւերդ՝ մեծ հոգիները լուիկ մնջիկ կը տառապին, գիտցիր ինքզինքդ կառավարել, գիտցիր ստոյիկեան համբերատարութեամբ տանիլ ֆիզիքական եւ բարոյական ցաւերը, տառապիլ սորվէ առանց տրտնջալու, արդարակշիռ համակամութեան մը վարժուէ, ամէն բանի աղէկ կողմին ուշադիր եղիր եւ մոլթին մէջ ձգէ տխուր, գէշ կողմը, այսպէս րդէ, որպէսզի, ապագային, կեանքը արտասուեց հովիտ մը չնկատես, հաճոյք զգաս կեանքէն, բայց, միեւնոյն ատեն, ընտելանաս մահուան գաղափարին հետ, պատրաստուիս անոր եւ ժպտելով ընդունիս մահը: Կեանքը լի է ձախորդութիւններով. առողջ ուղեղով մարդը անցեալի ձախորդութիւնները չորոճար անդադար, որովհետեւ անոնք կը տկարացնեն, կը ջլատեն ներկան. առողջ ուղեղով մարդը կը մոռնայ անարդարութիւնները, ձախորդութիւնները, նախանձոտութիւնները, բախտին հագար ու մէկ դառն հարուածները, իր կոնակը կը դարձնէ անցեալին, եւ, պայծառ ու զուարթ, կը դիտէ ապագան. կը մոռնայ դժբախտութեան օրերը, առանց սակայն մոռնալու դժբախտութեան դասերը, ինչպէս կը պատուիրէր Կէսներ: Իր խտէպին ետեւէն կ'երթայ, գեղուն այն ուժով, զոր իրեն կու տայ պարտականութիւնը կատարելու զգացումը: Իրրեւ մէկ անդամը մարդկութեան՝ որուն համար կ'ապրի, ամէն մարդ գործ մը ունի կատարելիք այս աշխարհի վրայ: Երբ մարդ այս գաղափարով լեցուած է եւ այս համոզումն ունի, կեանքին ձախորդութիւնները չեն կրնար դառնացնել զինքը եւ ոչ ալ մահը՝ սարսափեցնել գայն: Զուարթօրէն կ'ապրի՝





ամէն օր կատարելով իր գործը, այնքան ճշմարիտ է թէ երջանիկ ըլլալու ճշմարիտ գիտութիւնը իր պարտականութիւնը կատարելն է եւ հաճոյքը իր պարտականութեան կատարման մէջ փնտռելն է: Եթէ արկածի մը զոհ երթայ, ձախորդութեան մը ենթակայ ըլլայ, ինքզինքը երջանիկ կը համարի աւելի մեծ արկածի մը, ձախորդութեան մը հանդիպած չըլլալուն: Չի նախանձիր անոր որ լաւագոյն համարուած ընկերային դիրք մը ունի, իրմէ աւելի հարուստ է՝ չի նախանձիր, այլ հանդարտօրէն կը ջանայ իր դիրքը բարւոքել, առանց սակայն դառնանալու իր ներկայ դիրքէն, ընդհակառակը գուարթօրէն ընդունելով գայն: Չ'անարգեր իր դիրքը՝ հոն կը գործէ, կը տառապի եւ կը յաղթէ: Երանի անոր որ գիտէ այսպէս ապրիլ՝ այնպիսին աղէկ կը քնանայ՝ իր խորունկ եւ հանդարտ քունը չեն գար վրդովել յոռի եւ յոգնեցնող երագներ:

Սիրելի հայորդի, եթէ տեսնես ընկերներուդ մէջ մէկը, որ առաւօտուն անկողինէն ելլել չուզեր, որ պտոյտի գացած ատեն միշտ ետեւ կը մնայ, որ ներկան վայելել չի գիտեր, որ դժգոհելու պատճառ մը կը գտնէ միշտ, ուր երբեք գոհ չէ ո՛չ ինքզինքէն եւ ո՛չ ուրիշներէն, որ աշխատիլ չի սիրեր, ամէն գործ կը յետաձգէ, կամ թէ՛ ընդհակառակը, ջղագրգիռ վիճակ մը ունի, հանդարտ չի կրնար մնալ, չափազանց դիւրագգած է, պաղարիւնութիւնը պահել չի գիտեր, պարտականութիւն համարէ քեզ համար՝ ուժովցնել այդ ընկերդ, գուարթութեան, գոհունակութեան առաջնորդել զինքը՝ թերեւս յաջողիս, եւ յաջողելու պարագային՝ ազգասիրական կարեւոր գործ մը կատարած պիտի ըլլաս:

**Բ.- ՊՈՅ ՍԿԱՌԻՏ ՄԸ ԱԶՔԱԲԱՅ Է**

Պզտիկ հայորդի, որքան յաճախ, երբ ընկերդ նեղութիւն կը պատճառէ կամ կ'անիրաւէ քեզ, փոխանակ դուն անձամբ խօսք հասկցնելու անոր, դաստիարակիդ կ'երթաս տրտնջա-

լու՝ լալով կամ գայրացած: Վարժուէ քու գործերուդ տէրը ըլլալ, դժուարութիւններէ դուրս ելլել առանձին, առանց ուրիշին օգնութեան, առանց ուրիշին քղանցքէն կախուելու ամէն վայրկեան: Քու գործերդ դուն տես: Սորվէ՛ դժուարութիւններու հետ մաքառիլ, սորվէ հնարամիտ ըլլալ, դժուարութիւններէ դուրս ելլելու միջոցը գտնել՝ առանց ուրիշին օգնութեան գնումներ ընել, յանձնարարարութիւններ կատարել՝ առանց խաբուելու, գիշեր ատեն տեղ մը երթալ առանց վախնալու, բազմամբոխ տեղէ մը անցնիլ՝ առանց կառքի տակ մնալու: Դպրոցական կեանքը, ըլլայ դաս պատրաստելու համար, ըլլայ գրօսանքներու եւ պտոյտներու միջոցին, զանազան առիթներ կ'ընծայէ քեզի անդադար քու գործդ դուն տեսնելու, առանց ուրիշին օգնութեան: Օգնէ դուն քեզ, որպէսզի երկինքն ալ օգնէ քեզ, սա՛ թող ըլլայ նշանաբանդ: Իր գործերուն զաւակն ըլլալ, ինչ մեծ արժանիք: Ինքզինքով լեցուած ըլլալը աղուոր բան չէ անշուշտ, շատ տգեղ, շատ վնասակար թերութիւն մըն է, բայց անհատականութիւնը ուժովցնել առանց հիւանդոտ եսասիրութեան մը համեմատութիւններուն հասցնելու գայն, բարեմասնութիւն մըն է, պարտականութիւն մըն է: Տղաս, առաջինէն սոսկա՛, երկրորդը խնամով մշակէ՛ մէջդ:

**Գ.- ՊՈՅ ՍԿԱՌԻՏԸ ԳՈՐԾՈՂ Է**

Քիչեր կը սիրեն գործել: Շատեր նախամեծար կը համարին գործելը դիտել: Բազաթիւ են հանդիսատեսները, սակաւաթիւ են դերասանները: Շատեր կան խօսող, քարոզող: Քիչեր կան գործող: Արդ, կեանքը խօսք չէ, գործ է: Կենսականութիւն ունեցող ազգը ան է, որուն մէջ գործողներ շատ կան: Գեղեցիկ խորհուրդները օգուտ չունին՝ երբ բոժոժը կախող չկայ:

Քաղաքակիրթ կեանքը, իր հնարած նորանոր դիւրու-



թիւններով, գործելու կարողութիւնը կը բթացնէ, հարկ է կռուիլ այդ թշնամիին դէմ:

Փոխանակ Ֆուլթպոլ խաղացող, ըմբշամարտող, հողը մշակող, ձեռային աշխատութեամբ զբաղող ընկերները դիտելու մեղկօրէն եւ յուլբար, դուն ալ Ֆուլթպոլ խաղայ, դուն ալ մրցմանց մասնակցէ արիաբար: Փոխանակ զգեստիդ կոճակը ինկած պտըտելու՝ սպասելով որ ուրիշ մը կարէ գայն, առ ասեղը եւ թելը ու դո՛ւն կարէ կոճակդ: Փոխանակ միայն հիանալու ընկերոջդ տուփին վրայ, առ գործիքը ձեռքդ եւ դուն ալ գործէ, դուն ալ արտադրէ: Ամօթ է մակաբոյժ ըլլալ, պէտք է գործել, պէտք է արտադրել: Ի՛նչ փոյթ եթէ նախ չյաջողիս, մի՛ դադրիր փորձելէ, առանց սրտնեղութեան, այլ գուարթօրէն, ծիծաղ ի շրթունքս: Մի՛ ձանձրանար, մի՛ վհասիր, ձախողեցա՞ր, նորէն սկսէ՛: Վարժուէ ճիգիլուրջ մարդուն կեանքը ճիգելով շինուած է: Վարժուէ վտանգի գաղափարին. կեանք մը որ արժէք ունի՝ վտանգով լեցուն է: Արդ, պատիկ հայորդի, քու կեանքդ պէտք է ըլլայ լուրջ, օգտակար մարդու մը կեանքը եւ արժէքաւոր կեանք մը:

խը, գոյութեան պայմանը փոխադարձ օգնութիւնը եղեր է եւ է, համերաշխութիւնը, գործակցութիւնը, որ այնքան աւելի մեծ համեմատութիւններ կ'առնէ՝ որքան աւելի բարձրանաս կեանքի սանդուխին վրայ:

Պատիկ բարեկամս, ընկերային կեանքին այս կարեւոր պայմանը, փոխադարձ օգնութիւնը, շատ տկար է հայուն մէջ: Հայը հայուն համար գայլ է յաճախ. կը տեսնես թէ որքան դժուար պիտի ըլլայ քեզի համար մաքառիլ այս պապենական ախտին դէմ, բայց պոյ սկաուտին նշանաբանն է ճգնիլ, մաքառիլ դժուարութիւններու դէմ, եւ մի՛ մոռնար թէ յողթանակը այնքան աւելի արժէքաւոր կ'ըլլայ՝ որքան աւելի ճիգերով ձեռք բերուած է ան: Օն անդր, սիրելի հայորդի, պատուոյ խօսք տուր ամէն օր բարի գործ մը կատարել, ծառայութիւն մը մատուցանել ուրիշին, հոգ չէ թէ շատ փոքր ծառայութիւն մը ըլլայ ան. ա՛ս կերպով պիտի վերաշինես, պիտի փոխես հայու եսամոլ բնաւորութիւնդ եւ պիտի ունենաս գործակցութեան, փոխադարձ օգնութեան ոգին:

«Մարդ եմ եւ մարդկութեան վերաբերող որեւէ բան զիս անտարբեր պէտք չէ թողու»- այս մտածումը կրկնէ յաճախ մտքովդ՝ սա միւսին հետ. «Ոչինչ կ'արժէ ան մարդը՝ որ օգտակար չէ ուրիշին»:

**Դ.- ՊՈՅ ՍԿԱՌԻՏԸ ՈՒՐԻՇԻՆ ԿՕԳՆԷ**

Սիրելի հայորդի, կեանքը հիմնուած է փոխադարձ օգնութեան վրայ: Ուսումնասիրէ անասուններու կեանքը, ուսումնասիրէ վայրենիներու կեանքը, ուսումնասիրէ մարդկութեան պատմութիւնը ամբողջ, եւ պիտի տեսնես, թէ հազուագիւտ բացառութիւնները մէկ կողմ դնելով, կեանքին խարխուռը, փոխադարձ օգնութիւնը եղեր է եւ է, համերաշխութիւնը, գործակցութիւնը, որ այնքան աւելի մեծ համեմատութիւններ կ'առնէ՝ որքան աւելի բարձրանաս կեանքի սանդուխին վրայ:

**Ե.- ՊՈՅ ՍԿԱՌԻՏԸ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆ Է**

Անասունները մեր «ստորին եղբայրներն» են, անգթութիւն է անոնց վնաս հասցնել, զանոնք չարչարել: Այն մարդը



with the complements of

Restaurant Al-Mayass



որ անգթորէն կը վարուի անասուններուն հետ՝ բարի չի կրնար ըլլալ, կ'ըսէ Շոփեն-հաուերը: Իսկ երբ խնդիրը օգտակար անասուններու մասին է, ոչ միայն անգթութիւն, այլեւ անխելքութիւն է:

Գիտես թէ Պոլսոյ մէջ ալ կայ հիմա ընկերակցութիւն մը անասուններու պաշտպանութեան համար: Ամէն տղայ իրեն համար շատ պատուաբեր բան մը պիտի ընէր՝ որ դեգրելով այդ ընկերութեան սկզբունքները եւ մանաւանդ գործադրելով գանոնք: Արիութեան հետ բարութիւն մշակել քու մէջդ՝ ամէն ձեռով, ա՛յս թող ըլլայ, տղաս, քու ջանքերուդ առարկան: Ամէն անգամ որ անասուն մը շարժարելու յոռի գաղափարը մտքիդ առջեւ ցցուի, յիշէ թէ անասուններ կան որ իրենց տիրոջը մահուանէն վերջ իրենց սրտի ցաւէն մեռած են: Ու կարդա անասուններու մեծ բարեկամին, Վիքթոր Հիւկոյի տողերը՝ մեր կրտսեր եղբայրներուն նուիրուած:



աւելորդ է ըսել, անոնց՝ որ կրնան գինքը առաջնորդել իր ընկեր գիւտերուն մէջ: Բնութիւնը ամէնէն մեծ դպրոցն է. թող միայն Ֆութպոլը չըլլայ քու հաճոյքդ, պատիկ հայրորդի. նոյնքան սիրէ խոտը, առուակը, միջատը, լուսինը, աստղերը, անտառը, թռչունները, կեանքի այդ գանազան ձեւերը, բոլոր այդ ապրող բաները, բնութիւնը ամբողջ, հետաքրքրուէ բոլոր այդ կեանքով. որքա՛ն շատ բաներ կան հոն սորվելիք, մէկզմէկէ աւելի շահեկան, որքա՛ն կը զարգացնեն անոնք մարդուն իմացականութիւնը, որքա՛ն կ'ազնուացնեն անոնք մարդուն նկարագիրը, ուժովցնելով հանդերձ դնդերները եւ ջիղերը:

**2.- ՊՈՅ ՍԿԱՌԻՏԸ ԿԸ ՍՈՐՎԻ ՔՆՆԵԼՈՎ, ԴԻՏԵԼՈՎ, ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՄԲ**

Տղաքս, ձեր մէջ կան շատեր որ փորձելու, կրկին եւ կրկին փորձելու, անձնական համոզումներ գոյացնելու յոգնութենէն խոյս կու տան. աւելի կը սիրեն ուրիշներուն ըսածները կրկնել թութակի պէս. բառերով լեցնել իրենց ուղեղը, եւ ոչ անձնական զննութեանց, դիտողութեանց արդիւնքը եղող իրողութիւններով: Արդ, բառական ուսումը օգուտ չունի. իրական ուսումն է միայն արդիւնաւոր: Իր անունին արժանի ամէն պոյ սկաուտ կը դիտէ, կը բազդատէ, կը փորձէ եւ ինքը կը գտնէ ինչ որ սորվիլ կ'ուզէ, առաջնորդութեամբ,

**5.- ՄԻԱԿ ԽՕՍՔԻ ՄԸ ՄԷՋ ԿԱՐԵԼԻ Է ԽՏԱՑՆԵԼ ՊՈՅ ՍԿԱՌԻՏԻ ԱՐԺԷՔԸ. ՊՈՅ ՍԿԱՌԻՏԸ ՆԿԱՐԱԳՐԻ ՏԷՐ Է ԱՅՍԻՆՔՆ՝**

Ա.- Պոյ սկաուտը կը սիրէ դժուարութիւնները եւ հաճոյքը կը զգայ անոնց հետ կռուելէ. թուլամորթի կեանքը, ամէն բանի համար ուրիշէն կախում ունեցողի կեանքը սոսկում կ'ազդէ իրեն: Պոյ սկաուտը կը սիրէ պատերազմիլ ինքզինքին հետ եւ յաղթել ինքզինքին, ամէնէն դժուարինը պատերազմներուն եւ ամէնէն գեղեցիկը յաղթութեանց:

Բ.- Պոյ սկաուտը խօսքին տէրն է. թեթեւօրէն չի խոստանար ան, բայց խոստանալէ վերջ նախամեծար պիտի համարէր մեռնիլ՝ քան թէ խոստամադրուծ ըլլալ: Ան կը քննէ թէ խոստացածը արդար եւ կարելի է, որովհետեւ խոստումը վճարելի պարտք մըն է:

Գ.- Պոյ սկաուտը արդարակորով է, սուտ չի խօսիր, չի նենգեր, չի կեղծեր՝ ոչ իր յանցանքը պարտկելու համար, ոչ քննութեանց մէջ յաջողելու համար եւ ոչ ալ ուրիշ որեւէ ձեռով:





Դ.- Պոյ սկաուտը գիտէ հնազանդիլ, ան գիտէ թէ ուրիշներուն փորձառութիւնը որքան օգտակար, որքան կարեւոր է իրեն: որ անփորձ մըն է- որ նորընծայ մըն է կեանքի մէջ- ան գիտէ թէ յաւակնոտութիւնը ապուշներու յատկութիւնն է: Եւ յետոյ, հրամայել գիտնալու համար հնազանդիլ պէտք է:

Ե.- Պոյ սկաուտը քաղաքավար է- ան գիտէ թէ ազատութիւնը չի մերժեր քաղաքավարութիւնը եւ թէ ամէն մարդու պարտականութիւնն է քաղաքավար ըլլալ ամէն պարագայի մէջ եւ ամէն մարդու նկատմամբ, նոյնիսկ իր հակառակորդին հանդէպ:

Զ.- Պոյ սկաուտը խնայող է, որովհետեւ նկարագրի տէր ըլլալ կը նշանակէ իր ջիղերուն, իր կիրքերուն տէրն ըլլալ, եւ խնայող ըլլալ կը նշանակէ ջնջել իր մէջը այն հազարամէկ զգացումները, որոնք կը մղեն մարդը ընդունայն վատնելու դրամը: Պոյ սկաուտը, ինքը, ճիգի մարդ, ոչ միայն ընդունայն չի վատներ դրամը, այլ առանց դրամի օգնութեան կը ճգնի դուրս ելլել այն դժուարութիւններէն, որոնց ուրիշներ պիտի յաղթէին դրամով:

Է.- Պոյ սկաուտը սուրբ է մտածումով, խօսքով եւ գործքով- մտածումները կը կրեն դրոշմը այն միջավայրին, ուր կ'ապրի մարդ, իսկ խօսքը եւ գործը արտայայտութիւններն են մտածումին: Արդ, պոյ սկաուտը կ'ապրի առողջ, մաքուր, ազնիւ, աշխատող եւ օգտակար կեանքով մը, անոր ուղեղը չի հիւրընկալեր ոչ նենգութիւնը, ոչ նախանձը, ոչ ապուշ սիրարանութիւնը եւ ոչ ալ մին քան զմիւսն անիմաստ եւ վնաս



սակար մտածումները, որոնք ախտաժէտ երեւակայութեան մը մէջ միայն պիտի կարենային գտնել մշակութեան գետին մը: Կիկերոն կ'ըսէր, թէ այն մարդը որ իր արտը կը հերկէ՝ չարիք ընել չի խորհիր: Կարելի է ըսել, թէ այն տղան որ պոյ սկաուտի կեանքով կ'ապրի չարի մասին չի խորհիր:

3. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

(\*) Տե՛ս «Մարմնամարզ», Բ. տարի, թիւ 4 եւ յաջորդները:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com


48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)  
ԱՆՏԻՊ, Լ. ՄԱՍ

**Հ**ալէպի վարչութիւնը ստացած էր Երջանային Վարչութեան հարցարան-չրջաբերականը, բայց 24 Մարտ 1930-ի նիստին մէջ կ'որոշէ նամակով մը իմացնել, որ «մօտիկ օրէն այդ տեղեկութիւնները պիտի տրուին»: Ինչո՞ւ, որովհետեւ վարչութիւնը իր ընտրուած օրէն զբաղած է Ա. եւ Բ. խումբերուն վերակազմութեամբ, շարժանկարի երեկոյթի ձեռնարկով, մանաւանդ հայկական լիկ մաշով, որ Մարտ 11-էն ի վեր մեծ թափով կ'ընթանար: Հ.Մ.Ը.Մ-ի նախաձեռնութեամբ կազմակերպուած հայկական լիկ մաշին մաս կը կազմեն «Արարատ», «Ուսումնասիրաց», «Նուպարեան», «Որբերու Ընդհ. Միութիւն» «Վասպուրական», «Համազասպ»:

Երջանային Վարչութիւնը վաւերացման համար կը ստանայ նաեւ Թրիփոլի նորընտիր վարչութեան կազմը.- Մինաս Արծրունի, Գ. Փափագեան, Արիս Աթմաճեան, Վահան Գազանճեան, Յովհաննէս Ազըլբեան, Յովսէփ Առաքելեան, Հայկազ Ճրոեան: Անմիջականօրէն նորընտիր վարչութեան հետապնդումները կը կազմեն անդամներու, մարզիկներու, ֆութպոլիստներու, մարզանքի ու խաղերու ժամանակացոյցի պատրաստութիւնը, Ազգ. վարժարանի ի նպաստ հանգանակութիւնը, ներկայացումի մը հարցը, Հմայեակ Մատթէոսեանի դեկավարութեամբ նուազախումբի մը կազմութեան կարելիութիւնը ու մանաւանդ՝ սկաուտական հրատապ խնդիրը, որ կը կարօտէր նիւթականի: Այս հարցին յարմար լուծում մը գտած ըլլալու սրտի գոհունակութեամբ վարչութիւնը իր 13 Ապրիլ 1930-ի նիստին կ'արձանագրէ. «Անոնք որ կարող են սկաուտական համազգեստ շինելու թող այժմէն պատրաստուին, իսկ անոնք որ մէկ անգամէն չեն կարող բոլորը մէկանց վճարել, համազգեստին կէս գինին համար միութիւնը պատրաստ է իր կարելին ընելու, պայմանաւ որ վարչական ժողովէն երկու անդամի երաշխաւորութիւնը ապահովէ այն սկաուտը, որ կ'ուզէ համազգեստ ունենալ»:

Երջանային Վարչութեան 27 Մարտ 1930-ի նիստին, Ճորճ Միսիրեան կ'առաջարկէ որ Զատիկուան միջմասնաճիւղային հանգիպումները կազմակերպուին Հալէպի մէջ: Առաջարկը ընդունելով, 31 Մարտ 1930 թուակիր շրջաբերականով, Երջանային Վարչութիւնը կը հաղորդէ.

«Երջանային Վարչութեանս կարգադրութեամբ շրջանիս Հ.Մ.Ը.Մ-ին այս տարուան ֆութպոլի ախոյեանական մրցումները տեղի պիտի ունենան Հալէպի մէջ, Զատիկի առաջին ու երկրորդ օրերը- 20 եւ 21 Ապրիլ 1930,- որուն համար Երջանային Վարչութեան անդամներուն կողմէ տրամադրուած է արժաթեայ բաժակ մը:

«Այս մրցումներուն այս տարի պիտի մասնակցին միայն Հալէպի, Պէյրութի ու Դամասկոսի մասնաճիւղերը, պիտի կատարուին հետեւեալ կարգով.-

- «1. Պէյրութ - Դամասկոս, 20 Ապրիլ:
- «2. Հալէպ - նախորդ օրուան յաղթականին հետ, 21 Ապրիլ:
- «Այս առթիւ Հալէպի մասնաճիւղը պիտի ստանձնէ մրցումներուն մասնակցող միւս երկու մասնաճիւղերու խաղացողներուն բնակութեան եւ սնունդի հոգը:
- «Հալէպ պիտի ստանայ մրցումներէն գոյացած ընդհանուր հասոյթին հարիւրին ութսունը, իսկ Դամասկոս ու Պէյ-



րուժ իւրաքանչիւրը հարիւրին տասը»: Ասկէ վերջ շրջաբերականը կ'աւելցնէ. «Ասիկա լաւագոյն առիթը սեպելով, իրարու հետ շփման մէջ մտնելու, ամրապնդելու եղբայրական կապերը, կը հրաւիրենք բոլոր մասնաճիւղերը, եթէ իրենց նիւթական միջոցները թոյլատու են, ներկայ գտնուելու այս մրցումներուն, մեծ հաճոյքով պիտի ողջունենք զիրենք»:

Թրիփոլի իր 13 Ապրիլի նիստին մէջ կ'արձանագրէ. «Դժբախտաբար նամակը ուշ հասած ըլլալուն պատճառաւ պիտի չկրնանք հրաւէրին պատասխանել»: Իսկ Լաթաքիա, որ կ'ուզէ մասնակցիլ, անոր նամակին Շրջանային Վարչութիւնը 14 Ապրիլ 1930 թուակիրով կը պատասխանէ.

«Ստացանք ձեր թիւ 30 նամակը, անխառն հաճոյքով տեղեկացանք ձեր փափաքը մասնակցելու միջ-մասնաճիւղային մրցումներուն, որուն գոհացում տալը շատ ուշ ըլլալուն, Շրջանային Վարչութիւնս խոր ցաւ գգաց: Այս մասին ըլլալիք կարգադրութիւնները վերջ գտած եւ հրահանգները տրուած են:

«Բնական է, աւելի մեծ գոհունակութեամբ պիտի դիտէինք եթէ բոլոր մասնաճիւղերն կարենային մասնակցիլ»:

Շրջանային Վարչութիւնը 2 Ապրիլ 1930 թուագիրով, միջ-մասնաճիւղային հանդիպումի առնչութեամբ կը գրէ Հայէպին. «Կը յուսանք որ կարգադրութեանց եղանակը ձեզի դժգոհ ձգելու պատճառ մը պիտի չունենայ: Պիտի ուզէինք եղած հասոյթներէն ոեւէ բան չյատկացնել մասնաճիւղերուն, սակայն նկատելով որ անոնցմէ իւրաքանչիւրը այս տարի ունի նիւթական ծանր հոգեր, յարմար դատեցինք, գէթ ճամբու ծախքերը թեթեւցնելու համար, այդքան իրենց տրամադրել: Շրջանային Վարչութիւնը ձեր մասնաճիւղին կը թողու տեղւոյն վրայ գործը կազմակերպելու, յայտարարութիւններ

1957. Զ.Ս.Ը.Ս.ի Դամասկոսի ֆութպոլի խումբը:



ընելու, տոմսակներու գիները որոշել եւ անոնց սպառումը հետապնդել»:

Պէյրուսի մասնաճիւղը կ'որոշէ Ապրիլի գեղեցիկ օր մը, Ապրիլ 13-ին, Պէյրուսի Ս. Նշան եկեղեցին բակը կատարել սկաուտական երգման արարողութիւն.

«Ամէն հայ պէտք է ներկայ գտնուի այս հանդէսին, ականատես ըլլալու համար մօտ 50 սկաուտներու՝ հայրենիքին ու ազգին ծառայելու, օրինապահ, պարտաճանաչ ու բարձր ոգիով օժտուած անհատ մը դառնալու իր երգման» («Ազդակ», 9 Ապրիլ): Այս առիթը Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը չ'ուշանար մասնաճիւղերուն գրելու: Հայէպ զըրկուած 8 Ապրիլ թուակիրին մէջ կ'ըսէ.

«Հաճոյքով կու գանք Ձեզի հաղորդելու, որ Պէյրուսի մասնաճիւղը մօտ 50 նորընծայ սկաուտներ պատրաստած ըլլալով, անոնց երգման արարողութիւնը հանդիսաւոր կերպով պիտի կատարուի յառաջիկայ Ծաղկազարդի Կիրակին, 13 Ապրիլ 1930, քաղաքիս Ս. Նշան եկեղեցին բակին մէջ, Ս. Պատարագէն անմիջապէս ետք:

«Շրջանային Վարչութիւնս ստանձնած է հովանաւորել այս հանդէսը: Այս առիթը կու գանք ջերմապէս հրաւիրելու Ձեր մասնաճիւղը, որ մեզի մասնակից ըլլաք այս արարողութեան հաճոյքին»:

«Կիրակի օր, Ս. Նշան եկեղեցւոյ շրջափակին մէջ, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներու երգման խորհրդաւոր արարողութիւնը չափազանց խանդավառ մթնոլորտի մը մէջ: Ցարդ նմանը չտեսնուած երկսեռ հոծ բազմութիւն մը լեցուած էր ամբողջ շրջափակը: Յաւարտ Ս. Պատարագի, կանոնաւոր շարքերով եկան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները, որոնց յաջորդեցին արաբական



1934. Զ.Ս.Ը.Ս.ի Ալեքսանտրէթի եւ Անտիոքի ֆութպոլի խումբերը Անտիոքի մէջ:



երկու սկաուտական ծանօթ խումբեր իրենց խմբապետներով, որոնք ամբողջ արարողութեան ընթացքին պատուի կեցան, ի յարգանս հայ նորընծայ սկաուտներուն: Իսլամական սկաուտներու կողմէ ղրկուած էր յարգալից նամակ մը, որ ներողութիւն կը խնդրէր իրենց պատճառաբանեալ բացակայութեան համար:

«Սկաուտներու ընդհ. պետ Հանիի արաբերէն ըրած կարճ բանախօսութենէն վերջ, բանախօսեցին Սիմոն Թերճանեան եւ Վարդան Գէորգեան:

«Արարողութեան աւարտումին, սկաուտական բոլոր խումբերն ու ժողովուրդը ուղղուեցան դէպի Լիբանանի կառավարութեան սերայը, որուն առջեւ համախմբուած բազմահազար հայ եւ տեղացի բազմութեան ներկայութեան, հայ եւ արաբ սկաուտական խումբերը բարեւեցին լիբանանեան դրօշը՝ ուխտելով անոր հաւատարիմ մնալ» («Ազդակ, 16 Ապրիլ 1930):

Պէյրուսի սկաուտական երգման արարողութենէն շաբաթ մը ետք, Պէյրուսի ֆուլթայոյի խումբը, ընկերակցութեամբ քանի մը տասնեակ անդամներու, կը մեկնի Հալէպ, մասնակցելու միջ-մասնաճիւղային մրցումներուն:

«Զէր կարելի չլուզուիլ այն եղբայրական ընդունելութեան, որով Հալէպի կայարանին մէջ դիմաւորուեցան Պէյրուսի խումբն ու անդամները, իրենց քոյր մասնաճիւղին կողմէ: Առողջ ու ջլապինդ սկաուտ պատանիներ՝ ամէն անցքերու վրայ պատուի կեցած էին: Տեղական վարչութեան անդամները գիրկընդխառնումներով ընդունեցին իրենց 50-ի մօտ եղբայրները: Համակրական ցոյցերէ եւ պատիւներէ վերջ, անոնք ինքնաշարժներով առաջնորդուեցան վարչութեան կողմէ նախապէս պատրաստուած տեղերը: Միեւնոյն համակրական ցոյցերն ու ջերմ ընդունելութիւնը նաեւ Դամասկոսի մասնաճիւղի 25 անդամներուն, որոնք նոյն գիշեր ինքնաշարժի ճամբով կը ժամանէին Հալէպ: Վարչութեան անդամները գիրենք դիմաւորելու գացին քաղաքէն դուրս 25 քիլոմետր հեռավորութեան վրայ, եւ սկաուտներ, քաղաքին մուտքին, պատիւներով ողջունեցին գիրենք: Մեծ ոգեւորութիւն կը տիրէր քաղաքին հայութեան մէջ եւ ամէն տեղ համակրական արտայայտութիւններ կ'ըլլային Հ.Մ.Ը.Մ-ի հասցէին եւ մասնաւոր շահագրգռութիւնով կը հետեւէին անոր շարժումներուն:

«Առաջին մրցումը տեղի ունեցաւ Կիրակի օր, Պէյրուսի ու Դամասկոսի խումբերուն միջեւ, Հ.Մ.Ը.Մ-ի շքեղ դաշտին վրայ: 3000-4000ի մօտ երկսեռ բազմութիւն մը դաշտին բոլոր կողմերը շրջապատած էր - կատարեալ կարգապահութեամբ եւ հետաքրքրութեամբ կը հետեւէր խաղին, որ վերջացաւ Պէյրուսի յաղթութեամբ: Դամասկոսի ֆուլթայոյիստները, որոնք բաղդատաբար աւելի փոքր էին, ունեցան կանոնաւոր խաղարկութիւն, արժանացան բոլորին գնահատանքին:

Երկուշաբթի տեղի ունեցաւ Պէյրուս-Հալէպ խումբերուն մրցումը, որուն յաղթականը պիտի շահէր Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան կողմէ յատկացուած արծաթեայ բաժակը:

(Շար. 30)

# ՊԱՏՈՒԱԲԵՐ...

(Շարունակուած Բ. կողքէն)

Արարատ հայկական միութիւն (Վալենսիա, Սպանիա), «ԿԱՄԿ» հայ երիտասարդական միութիւն (Խրիմ, Ուքրանիա), «Մեր ապագան» Աճառիոյ հայ երիտասարդներու միութիւն (Վրաստան), «Երիտասարդներու կամուրջ» միութիւն (Ախալքալաք, Վրաստան), Կրթասիրաց մշակութային միութիւն (Հալէպ, Սուրիա), Վրաստանի հայ համայնքի երիտասարդական միութիւն (Թիֆլիս, Վրաստան), Վրաստանի հայ համայնքի ուսանողական միութիւն (Թիֆլիս, Վրաստան), Վրաստանի հայ համայնքի պատանեկան միութիւն (Թիֆլիս, Վրաստան), Հայկական թատրոն (Մոսկուա, Ռուսիա), Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն (Հալէպ, Սուրիա), «Նոր Սերունդ» երիտասարդական կազմակերպութիւն (Ս. Փեթերսպուրկ, Ռուսիա), Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն (Լոնտոն, Անգլիա), Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի



շրջան (Պուէնոս Այրէս, Արժանթին), Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջան (Լոս Անճելըս, Մ. Նահանգներ), Համաշխարհային հայկական երիտասարդական ուստայն (Հորանտա), Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն (Պէյրուս, Լիբանան) եւ Արիագիոյ երիտասարդական «Նայիրի» կազմակերպութիւն (Աբխազիա):





# ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԶԸ ԿՐՈՂ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԻՒՒՆ ԶԳԱՆ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ՍՈՒՐԻՈՅ ԹԵՆԻՍԻ ՆԱԽԿԻՆ  
ԱԽՈՅԵԱՆ՝ ՔՈՅՐ ԱՐՇՕ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ-ԱՍՏՈՒՐԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝ Բաֆֆի Սիլվաիեան  
ՀԱԼԷՊ

**Հ**.Ս.Ը.Ս.ի մարզական խումբերը տարիներու ընթացքին ունեցած են այնպիսի խաղացողներ, որոնք անսահման ծառայութեամբ կարողացած են իրենց անունները անջնջելի պահել եւ դառնալ իտեալը ապագայ սերունդներուն: Հ.Ս.Ը.Ս.ի Սուրիոյ նուիրեալ նման մարզիկուհիներէն մէկն է քոյր Արշօ Նահապետեան-Աստուրեանը, որ փոքր տարիքին անդամակցած է Հ.Ս.Ը.Ս.ի շարքերուն եւ իր անսակարկ ծառայութեամբ հասած է մինչեւ պատասխանատու դիրքեր: Ան ապրած է միութեան փառքի օրերը, երկար տարիներ տիրանալով Սուրիոյ թենիսի ախոյեանութեան:



Իբրեւ պասքէթի աղջկանց խումբի նախկին պատասխանատու, 1999 թուականին քոյր Արշօ տիրացաւ նախագահի բաժակին, իսկ 2000 թուականին հանդիսացաւ Սուրիոյ ախոյեան: 1955-ի ծնունդ քոյր Արշօն նախնական ուսումը ստացած է Ազգ. Հայկազեան վարժարանէն, ապա յաճախած է Քարէն Եփփէ Ազգ. ճեմարան: 1974-ին, պասքէթի տղոց խումբի նախկին խաղացող Արմէն Աստուրեանին հետ ան կը կազմէ ընտանեկան իր բոյնը եւ կը բախտաւորուի երեք զաւակներով, որոնք Հ.Ս.Ը.Ս.ի շարքերուն մէջ կը դառնան մարզիկներ: Ներկայիս, քոյր Արշօ ընտանիքին հետ հաստատուած է Գանատա, ուր կը շարունակէ միութեանական իր գործունէութիւնը՝ այս անգամ Օգնութեան Խաչի եւ Համագայի մէջ: Քրոջ Հալէպ այցելութեան պատեհ առիթէն օգտուելով՝ իր հետ ունեցանք այս հարցազրույցը:



**Ինչպէ՞ս սկիզբ առաւ ձեր մարզական կեանքը:**

- Ես մեծցած եմ միութեանական ընտանիքի մը մէջ: Երբ մանուկը աչքը կը բանայ միութեանական միջնորդութի մէջ՝ կը շարունակէ նոյն ճամբով: Ես ապրեցայ Հ.Ս.Ը.Ս.ական բնագոյով՝ եղայ արժուիկ, ապա՝ մարզիկ: Զորս տարեկանիս, առաջին քայլս սկսայ արժուիկութեամբ: Շրջան մը վերջ հետեւեցայ մարզական կեանքին, ընտրելով թենիսի եւ պասքէթի մարզաձեւերը: Հայկազեան նախակրթարանին մէջ հետեւեցայ աթլէթի փորձերու, ապա՝ Ազգ. Քարէն Եփփէ ճեմարանին մէջ, մարզանքի ուսուցիչ Աբրահամ Քէչիչեանին առաջարկեցի, որ թենիսի փորձերու հետեւիմ: Հանգուցեալ պարոն Աբրահամին ցուցմունքներով եւ քաջայերանքով տարի մը դպրոցին մէջ փորձեր կատարեցի, միեւնոյն ժամանակ անդամակցեցայ Հ.Ս.Ը.Ս.ի պասքէթի խումբին: Տարի մը ետք Հ.Ս.Ը.Ս.ի անունով մասնակցութիւնս բերի Հալէպի մակարդակի կազմակերպուած կրտսերներու ախոյեանութեան եւ գրաւեցի երկրորդ դիրքը: Այդ մրցումին երկրորդ դիրքը գրաւելս նեղութիւն պատճառեց ինծի եւ յաւելեալ փորձերու հետեւելով՝ յաջորդ տարի մասնակցութիւնս բերի Սուրիոյ ախոյեանութեան մրցումներուն:

**Թենիսի մարզին մէջ ի՞նչ մրցումներու մասնակցած էք եւ ի՞նչ եղած են ձեր արդիւնքները:**

- Այդ օրերուն, Հ.Ս.Ը.Ս.ի թենիսի աղջկանց խումբը ներկայացնողները ես եւ քոյր Մարի Մուրատեանն էինք: Անշուշտ, Մարին ինձմէ շատ առաջ սկսած էր թենիս խաղալ: Մենք միասնաբար կը ներկայացնէինք Հ.Ս.Ը.Ս.-ը: Սուրիոյ ախոյեանութեան մրցումներուն յաջորդաբար հինգ տարի գրաւեցինք առաջին երկու դիրքերը: Ընդհանրապէս Մարին կը գրաւէր առաջին դիրքը, իսկ ես՝ երկրորդը: Զոյգ աղջկանց մրցումներուն, ես ու Մարին միասնաբար յաջողեցանք տիրանալ Սուրիոյ ախոյեանութեան տիտղոսին: Մրցաշարքերուն տարի մը ես գրաւեցի առաջին դիրքը: Մեր միջեւ տարբերութիւն չկար, որովհետեւ մենք կը ներկայացընէինք Հ.Ս.Ը.Ս.-ը: Նախքան Գանա-



տա մեկնիր, չորս տարի եղայ Հ.Մ.Ը.Մ-ի թենիսի դպրոցի պատասխանատուն եւ Բիթոյին հետ միասնաբար կարողացանք պատրաստել քանի մը մարզիկներ:

**Իսկ պասքէթին մասին ի՞նչ կը փոխանցէք մեզի:**

- Ինչպէս որ ըսի, ես միաժամանակ հետեւած եմ երկու մարզաձեւի: Փոքր տարիքէս մուտք գործած եմ պասքէթի ընտանիք եւ փոխանցուած եմ անոր տարիքային բոլոր խումբերը: Առաջին տարին, երբ միացայ աղջկանց Ա խումբին, եղայ պահեստի մարզիկ, բայց տարի մը ետք արդէն առաջին հինգին մէջն էի: Այդ օրերուն մեր կազմը կը նկատուէր Սուրիոյ լաւագոյններէն: Խումբին մաս կը կազմէին Սօսի Միհրանեանը, Սիլվա Շառոյեանը, Արտեմիա Չոլաքեանը, Մարալ Պուտաքեանը եւ Մարի Մուրատեանը:

Այս կազմը երկար ժամանակ միասին մնաց եւ բոլոր մրցակից ակումբները կը խուսափէին մեր դէմ մրցելէ: Մեր խումբին խաղացողները բոլորն ալ ճեմարանականներ էին եւ միասին՝ մէկ ընտանիքի պէս, մեր մասնակցութիւնը կը բերէինք միջ-դպրոցական մրցաշարքերու: Այդ շրջանին հրաւիրուեցայ նաեւ Սուրիոյ աղջկանց հաւաքական: 1974-ին, երբ ամուսնացայ, որպէս խաղացող, հեռացայ պասքէթէն, բայց մնացի որպէս թենիսի մարզիկ՝ շարունակելով փորձերս եւ մրցումներս:

**Որո՞նք եղած են այն մարզիկները, որոնք ազդած են ձեր վրայ:**

- Որպէս թենիսի մարզիկ, գիտ մարզած է հանգուցեալ եղբայր Աբրահամ Քէչիչեանը, որմէ ես շատ օգտուած եմ: Իմ եւ բոլոր մարզիկներու յաջողութիւնը կը պարտինք իրեն: Իսկ



պասքէթի մարզիչը այդ շրջանին եղաւ Յարութ Յարութիւնեանը՝ «Ռոզա»ն, որ նաեւ տղոց խումբին մարզիչն էր: Իր շրջանին փայլուն արդիւնքներ արձանագրեցինք: Ան շատ սերունդներ մարզեց, բայց դժբախտաբար իր ճամբորդութեան պատճառով ներկայիս անոր անունը չի յիշուիր որեւէ առիթի:

**Հ.Մ.Ը.Մ-ի աղջկանց խումբի պատասխանատու եղած շրջանին, ձեր խումբը տիրացաւ Սուրիոյ ախոյեանութեան. ի՞նչ կը յիշէք այդ օրերէն:**

- 1991 թուականին օրուան վարչութիւնը ինձի վստահեցաւ աղջկանց պասքէթի խումբին պատասխանատուութիւնը: 1999 թուականին առաջին անգամ ըլլալով կազմակերպուեցաւ աղջկանց մակարդակի նախագահի բաժակի մրցաշարքը եւ մեր կազմը պատիւը ունեցաւ տիրանալու ախոյեանութեան:

2000 թուականին, երբ տիրացանք Սուրիոյ ախոյեանութեան, խումբին բոլոր մարզիկները կը խաղային առանց նիւթական հատուցում ստանալու: Բազմաթիւ առիթներով իրենց առաջարկուեցաւ գումարներ, բայց անոնք մերժեցին բոլոր առաջարկները: Խաղացող մը երբ անվճար կը խաղայ, կը զգաս, որ ան մարզանքը սիրելով է որ կ'ընէ, եւ ոչ թէ որպէս պաշտօն: Ճիշդ է, որ ներկայ պայմանները կը պարտադրեն վճարումը, բայց այդ ըսել չէ, որ մարզիկ մը պէտք է մոռնայ միութենական իր նուիրումը: Ախոյեանութեան տիրացման մէջ մեծ դեր ունեցաւ օրուան մարզիչը՝ Մաժտ Խառամը, որ կրցաւ խումբը պահել լաւագոյն դիրքերու վրայ, արձանագրելով պատուաբեր արդիւնքներ:

Այդ շրջանին, խումբի աղջիկներուն մեծամասնութիւնը ուսուցչուհիներ կամ պաշ-





տօնեաներ էին, եւ ամէն օր ներկայ կը գտնուէին իրենց փորձերուն, առանց որեւէ թերացում արձանագրելու: Այդ խումբին յաջողութեան հիմնական պատճառներէն մէկը իրենց միակամ ըլլալն էր: Մինչեւ այսօր անոնք իրարու հետ հեռաձայնով կը խօսին, յաճախ միասին կ'ըլլան, եւ այս մէկը հոգեկան գոհունակութիւն կը պատճառէ ինծի, որ կրցած եմ խումբին մէջ լաւ յատկութիւն մը սերմանել: Այդ խումբով մենք մեր մասնակցութիւնը բերինք նաեւ համահայկական խաղերուն: Օրին, մենք նիւթական դժուարութիւններու դէմ յանդիման գտնուեցանք, բայց յաջողեցանք՝ պարահանդէս մը կազմակերպելով, վիճակահանութիւններու միջոցով եւ Հ.Մ.-Ը.Մ.ականներու նուիրատուութեամբ, տղոց եւ աղջկանց խումբերու 25 մարզիկներով ուղղուելի Հայաստան եւ բարձր մակարդակի խաղարկութեամբ մասնակցիլ մրցաշարքին:

Արդարօրէն, աղջկանց խումբը, որ այդ շրջանին կը մարզէր Հրաչ Պատիկեանը, պէտք էր որ տիրանար երրորդութեան, բայց դժբախտաբար գրաւեցինք չորրորդ դիրքը: Կազմակերպող մարմինը մեզ գնահատելով՝ իւրաքանչիւր մարզիկի փոխանցեց գովասանագիր մը:

**Ի՞նչ տեղեկութիւններ ունիք ներկայ կազմին մասին:**

- Ես ընդհանրապէս համացանցի միջոցով է, որ կը հետեւիմ Հ.Մ.-Ը.Մ.ի արդիւնքներուն: Փափաքս է միշտ լաւ լուրեր կարդալ, բայց ցաւօք, շրջան մը նոյնիսկ իրարու դէմ եղած

լարուածութիւնները ներկայացուեցան համացանցին մէջ, ինչ որ նեղութիւն պատճառեց ինծի եւ բոլոր անոնց, որոնք Հ.Մ.-Ը.Մ.ի լուրերուն կը հետեւին: Մարզական խումբ մը եթէ միակամ չըլլայ՝ պատճառ կ'ըլլայ խումբին ձախողութեան: Հալէպ նախորդ այցելութեանս, քանի մը առիթով առաջարկեցի ներկայանալ եւ, որպէս նախկին պատասխանատու, մտահոգութիւններս փոխանցել: Օրին, տեսակէտս փոխանցեցի պատասխանատու եղբօր մը, բայց այդ մէկը կատարուեցաւ մէկուկէս տարի ետք: Այս օրերուն, արհեստավարժութիւնը պատճառ կը դառնայ, որ մարզիկներ փնտռեն իրենց ուղին, եւ պէտք է նկատի առնուին անոնց մտահոգութիւնները, որովհետեւ բոլորը զիրար կ'ամբողջացնեն, իսկ համագործակցութիւնը անհրաժեշտութիւն է բոլորին համար:

**Աւարտին, ի՞նչ կ'ուզէք փոխանցել մեր ներկայ մարզիկներուն:**

- Միութեան տարազը կրող մարզիկները պէտք է պատկանելիութիւն զգան, ըլլան միակամ, իսկ պատասխանատու կազմը արժանաբար եւ արդարացիօրէն ստանձնէ պատասխանատուութիւնները: Շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի, որ առիթը ընծայեցիք ինծի ներկայանալու այս հարցազրոյցով:

*'Made from one single slice of natural Australian opal'*

# Classique

## OPAL DIAL WATCH



*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.*  
 123 Clarence Street  
 Sydney 2000  
 Australia

Phone: +61 2 9290 2199  
 fax: +61 2 9262 1630  
 Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
 Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)





# ՄՈՆՏԻԱԿ 2014. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՕՏԻԻ ԽՄԲԱԿՆԵՐԸ

## Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ



**7** Սեպտեմբեր 2012-ին պիտի սկսին Մոնտիալի եւրոպական գօտիի գտումի մրցումները, մասնակցութեամբ 53 երկիրներու ազգային խումբերու: Անոնք բաժնուած են 9 խմբակներու: Առաջին դիրքը գրաւող խումբերը ինքնաբերաբար կը մասնակցին Մոնտիալին, իսկ առաջին ութը

խմբակներուն երկրորդ դիրքը գրաւող խումբերը կը խաղան փլէյ-օֆի մրցումներ եւ յաղթական չորս խումբերը միանալով ինը խումբերուն կ'անցնին Մոնտիալի վերջին հանգրուան: Այս ձեւով, Մոնտիալին Եւրոպան կը ներկայացուի 13 երկիրներով: Զտումի մրցումներուն առաջին հանգրուանը կ'աւարտի 15 Հոկտեմբեր 2013-ին: Փլէյ-օֆի մրցումները կը կատարուին 15 եւ 19 Նոյեմբեր 2013-ին:

Խմբակներու վիճակաձգութեան պատկերը կարելի է համեմատաբար արդար նկատել: Եթէ զանց առնենք իններորդ խմբակը, ապա մնացեալ խմբակներուն մէջ ստեղծուած են մրցակցութեան հաւասար կարելիութիւններ: Իններորդ խմբակի պարագային, որ կը բաղկանայ հինգ խումբէ, միայն մէկ երկիր պիտի մասնակցի, հետեւաբար ախոյեան Սպանիոյ կամ Ֆրանսայի նման լաւ կազմ մը պիտի բացակայի Մոնտիալին:

**ԱՌԱՋԻՆ** խմբակին մէջ հզօր խումբի մը բացակայութիւնը պատճառ է, որ մնացեալ բոլորին ախորժակները սրին: Խրուաթիա արդէն քսան տարի է յաճախակի մասնակցու-

թիւն կը բերէ մրցաշարքերուն եւ երբեմն լաւ արդիւնքներ ալ կ'արձանագրէ: Սերպիա, Նոյնպէս, դրական արդիւնքներ արձանագրող կազմ մըն է, թէեւ տակաւին չէ յաջողած վերականգնել նախկին Եուկոսլաւիոյ փառքը: Պելճիքացիք աննախատեսելի են, թէ՛ իբրեւ խաղարկութիւն եւ թէ՛ իբրեւ յաջողութիւն: Ութսունականներու յաջողութիւններէն ետք անոնք անցած են իրենց հարեւանին շուքին տակ: Սկովտիացիք, որ 12 տարիէ բացակայ են, պիտի ուզեն ո'չ միայն վերադառնալ, այլեւ յաջողութիւն արձանագրել եւ անցնիլ յաջորդ հանգրուաններ: Կալէս եւ Մակեդոնիա մեծ յոյսեր չունին, բայց կրնան վերոնշեալ խումբերուն հաշիւները խանգարել անակնկալ կէտեր խելով անոնցմէ:

**ԵՐԿՐՈՐԴ** խմբակին մէջ պայքարը բաւական սուր պիտի ըլլայ: Իտալիոյ ներկայութիւնը պատճառ պիտի չըլլայ որ մնացեալ խումբերը յուսահատ կացութեան մատնուին: Եթէ իտալացիք տեսականօրէն կը գերազանցեն իրենց մրցակիցները, ապա անոնք յաճախ ինկած են փոքրերու ծուղակին մէջ: Դանիացիք որոշ աշխուժութիւն մը գտած են վերջին տարիներուն, եւ թէեւ հէքիաթային չեն անոնց ֆուլթայոյն ու արդիւնքները, սակայն ի վիճակի են անակնկալներ ստեղծելու: Չեխիոյ կազմը այն չէ ինչ որ էր տասը տարի առաջ: Պարոսի, Նետվետի եւ ընկերներուն ձգած բացը տակաւին կարելի չէ եղած գոցել: Այսուհանդերձ, չեխական ֆուլթայոյր միշտ ալ վերանորոգման փաստը տուած է: Պուլկարացիք աւելի քան տասը տարիէ «խոր քունի» մէջ են եւ զարթնելու նշաններ ցոյց չեն տար: Պուլկարացիք ակնկալութիւններ չունին այս անգամ ալ: Հայաստան ի վիճակի է «Եւրօ 2012»-ի նման անակնկալներ ստեղծելու: Հայրենի ֆուլթայոյր աննախընթաց զարթօնք մը կ'ապրի: Լաւ պատրաստուելու եւ ամէն ինչ ճիշդ ձեւով հաշուարկելու պարագային, Հայաստանի մասնակցութիւնը Մոնտիալին հեռաւոր երազ մը ըլլալէ



կը դադրի: Խմբակին վերջին խումբը՝ Մալթա պիտի փորձէ նուազագոյն վնասներով դուրս գալ մրցակցութենէն:

**ԵՐՐՈՐԴ** խմբակին մէջ մրցակցութիւնը սուր պիտի ըլլայ Գերմանիոյ, Շուէտի եւ Այիրի միջեւ: Հաւանաբար Գերմանիա կը գերազանէ բոլորը իր պատմութեամբ եւ խաղամակարդակով, սակայն թէ՛ Շուէտ եւ թէ՛ մանաւանդ Այիր յամառ պայքարող կազմեր են: Աւստրիացիք կրնան իրաւարարի դեր կատարել այս խումբերուն միջեւ եւ, ինչու չէ, անոնց սայթաքումներէն օգտուելով իրենք բարելաւեն իրենց արդիւնքները եւ գրաւեն առաջին երկու դիրքերէն մէկը: Ֆարօ կղզիներն ու Ղազախստանի կազմերը ոչինչ ընելիք ունին, բացի իրենց մրցումները կատարելէ...

**ՉՈՐՐՈՐԴ** խմբակին մէջ թերեւս Հոլանտա առաւելութիւն մը ունի մնացեալ կազմերէն, սակայն հոլանտացիք պէտք է զգոյշ ըլլան անիմաստ կէտեր չկորսնցնելու: Թուրքիա, Հունգարիա եւ Ռումանիա պիտի մրցին Հոլանտայի կողքին: Թրքական ֆուլթպոլը նահանջ կ'ապրի, մինչ հունգարական ֆուլթպոլը սկսած է զարթոնք ապրիլ: Վերջին Եուրոյի գտումի մրցումներուն, քսան տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով, անոնք լուրջ մրցակցութեան մէջ մտան իրենց խմբակին մէջ: Ռումանացիք կը մնան անակնկալներու կազմ մը եւ ի վիճակի են մրցելու լաւ արդիւնքներ արձանագրելու համար: Էսթոնիա եւս կրնայ որոշ անակնկալներ ստեղծել եւ ոսկի կէտեր «կորզել» այս կամ այն կազմէն: Մինչ Անտորա պիտի փորձէ նուազագոյն թիւով կոլեր ստանալ իր մրցումներուն:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ** խմբակին մէջ մրցակցութիւնը պիտի սահմանափակուի Նորվեգիոյ, Չուիցերիոյ եւ Սլովենիոյ միջեւ: Նշեալ երեք կազմերն ալ օժտուած են հաւասար կարելիութիւններով եւ պայքարը սուր պիտի ըլլայ անոնց միջեւ: Խմբակին մնացեալ երեք կազմերը՝ Ալբանիա, Իսլանտա եւ Կիպրոս դժուար թէ կարենան մրցիլ առաջին երեքին հետ, սակայն անոնք ի վիճակի են յաղթանակներ արձանագրելու եւ այս կամ այն խումբին ձախողութեան պատճառ դառնալու:




**ՎԵՑԵՐՈՐԴ** խմբակին մէջ գլխաւոր թեկնածուները, անկասկած, Փորթուգալն ու Ռուսիան են: Փորթուգալցիք արդէն իսկ իրենք զիրենք հաստատած են նման մրցաշարքերու մասնակցութեան ապահովութեան իմաստով: Իսկ Ռուսիա լաւ պատրաստուած կազմ մըն է: Առանց մոռնալու, որ ռուսական ֆուլթպոլը վերջին տասնամեակին ինքզինք գտած է: Իսրայէլ եւ Հիւսիսային Իրլանտա պիտի փորձեն Ռուսիան կամ Փորթուգալը «գահընկէց» ընել, որպէսզի հասնին Մոնտիալին: Անոնք դժուար առաքելութեան մը նախօրէին են: Ազրպէյճան եւ Լիւքսեմպուրկ կրնան խանգարել Իսրայէլի եւ Հիւսիսային Իրլանտայի հաշիւները, ուստի պէտք է զգուշանալ անոնցմէ:

**ԵՕԹՆԵՐՈՐԴ** խմբակին մէջ կատարեալ անորոշութիւն կը տիրէ: Յունաստան, Սլովաքիա, Պոսնիա, Լիթվանիա եւ Լատվիա թեկնածու են եւ ի վիճակի են հասնելու Մոնտիալին: Յոյները եւ սլովաքները ամէնէն հաւանական թեկնածուներն ու ամէնէն փորձառուներն են: Պոսնիացիք հետզհետէ աւելի փայլուն արդիւնքներ կ'արձանագրեն: Մինչ Պայթեան երկու երկիրները թէեւ անկայուն արդիւնքներ ունին, սակայն կրնան մեծ անակնկալներ ստեղծել եւ անհաճոյ իրականութեան առջեւ դնել յոյներն ու սլովաքները: Միայն Լիթվանացիներն է որ դիտողի դեր ունի եւ... առ ի պարտականութիւն պիտի կատարէ իր մրցումները:

**ՌԻԹԵՐՈՐԴ** խմբակին մէջ անգլիացիք կը թուին համեմատաբար հանգիստ ըլլալ: Հաւանաբար Մոնթենեկրօ, Լեհաստան եւ Ուքրանիա մրցին երկրորդ տոմսին համար: Այս երեք կազմերէն ամէնէն հաւանական թեկնածուն Ուքրանիան է, որ արդէն տասնամեակ մըն է որ ինքզինք հաստատած է ֆուլթպոլի աշխարհին մէջ, իբրեւ կայուն կազմ եւ ուժեղ մրցակից: Լեհաստան արդէն քսանհինգ տարիէ կը փնտռէ Պոնիէքներու, Չարմախներու եւ Լաթօներու յաջորդը: Մոնթենեկրօ տակաւին ինքզինք չէ հաստատած, բայց կրնայ անակնկալներ ստեղծել: Մինչ Մոլտաւիա եւ մանաւանդ Սէն Մարինօ ոչինչ պիտի կարենան ընել: Անոնք սոսկական մասնակցութիւն պիտի բերեն այս մրցաշարքին:

**ԻՆՆԵՐՈՐԴ** խմբակը «մահուան խմբակն» է: Ախոյեան Սպանիա կամ Ֆրանսա դուրս պիտի մնան Մոնտիալէն: Այս երկու կազմերուն համար սխալիլը արգիլուած է: Հաւանաբար այս երկու կազմերուն միջեւ կայանալիք մրցումներուն արդիւնքները ճշդ են անոնց ճակատագիրը, բայց եւ այնպէս անոնք անսրխալական մրցումներ պէտք է կատարեն: Սպանացիք այսօր կը գտնուին իրենց փառքի գագաթնակէտին: Ֆրանսացիք թէեւ չունին նախորդ տարիներու հզօր կազմը, սակայն կը մնան ֆուլթպոլի մեծերէն: Պիլիոռուսիա, Վրաստան եւ Ֆինլանտա յոյսեր չունին այս մեծերուն ներկայութեան տոմսի մը տիրանալու, սակայն պիտի փորձեն իրենց լաւագոյնը ներկայացնել:





Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան Գրասենեակ  
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

**Չ**որեքշաբթի, 11 Յունւար 2012-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու մասնաճիւղերու վարչութիւններն ու Շրջանային յանձնախումբերու անդամ-անդամուհիները համախմբուած էին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնի «Քէորզ Անտոնեան» սրահը՝ նոր տարին դիմաւորելու եւ բարեմաղթութիւններ փոխանցելու յառաջիկայ տարեշրջանին համար:

Օրուան անակնկալը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան փոխատենապետ եղբ. Օշին Փիրումեանի ներկայութիւնն էր, որ յատուկ առաքելութեամբ մը ներկայացած էր ձեռնարկին:

Երեկոն Շրջանային Վարչութիւնը կողմէ կազմակերպուած ըլլալով, ներկաները ողջունեց եւ ամանորեայ շնորհաւորութիւններ փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան: Ապա, ան հրաւիրեց եղբ. Օշին Փիրումեանը ներկայացնելու օրուան անակնկալը:

Եղբ. Փիրումեան բացատրելով իր ներկայութեան պատճառը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Երեւանի մասնաճիւղի հիմնադիր, Կեդրոնական Վարչութեան հայրե-

## ՔՈՅՐ ՄԱՐՕ ՔԷՇԻՇԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱԻ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի «ՎԱՐԴԱՆ ԲԱԽՇԵԱՆ» ՅՈՒՇԱՄԵՏԱԼՈՎ

նի առաջին անգամ, զոհուած ազատամարտիկ Վարդան Բախշեանի նահատակութեան 20-ամեակին առիթով, որոշած է անոր յիշատակը անմահացնող յուշամետալ մը հրապարակել եւ ամէն տարի, համապատասխան հաստատագիրով պարգեւել այն անհատին, որ կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վերելքին:

Ապա, եղբայրը ներկայացուց նահատակ եղբ. Վարդան Բախշեանի կենսագրականը, ընդգծելով անոր ազգային նկարագիրը, որ գինք մղած էր մասնակցելու Ղարաբաղեան շարժման եւ նահատակուելու 1991-ի ազատագրական մարտերուն ընթացքին:

Այնուհետեւ, եղբ. Փիրումեան յայտարարեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը Վարդան Բախշեանի առաջին յուշամետալը կը յանձնէ քոյր Մարօ Քէշիշեանին՝ «Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ում ունեցած ներդրումների եւ Հայաստանում Հ.Մ.Ը.Մ.ի վերահիմնադրման գործում անփոխարինելի աւանդ ունենալու համար»:

Այս առիթով, եղբ. Փիրումեան ընդգծեց 1990-ական ղժուարին տարիներուն հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպման աշխատանքներուն քրոջ բերած օգտակար ներդրումը եւ վկայակոչեց այս մասին նահատակ եղբ. Բախշեանի կատարած հաստատումը Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ճրդ Ընդհանուր Ժողովին, Յունաստան, 1991-ին. «Մեզ համար անկիւնադարձային նշանակութիւն ստացաւ Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան խմբապետուհի քոյր Մարօ Քէշիշեանի առաքելութիւնը հայրենիք, որը հիմնականում կայացաւ հետեւեալ գործունէութիւնների մէջ, նոր մասնաճիւղերի հիմնումով...»:

Պարգեւատրումի արարողութենէն ետք, իր սրտի խօսքը փոխանցեց քոյր Մարօ Քէշիշեան: Ան շնորհաւորեց

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը Վարդան Բախշեանի յիշատակը անմահացնող յուշամետալին ստեղծման ուրախ առիթով: Ապա, շնորհակալութիւն յայտնեց առաջին պարգեւատրեալը ըլլալուն համար, միաժամանակ վստահեցնելով, թէ գոյութիւն ունին արժանաւոր բազմաթիւ այլ քոյր-եղբայրներ եւս, որոնք նոյն գնահատանքին արժանի են: Քոյր Մարօ աւելցուց ըսելով՝ «Գնահատանքը կ'արժեւորուի, երբ կարելու աշխատանք մը ստեղծուելէ ետք կ'արդիւնաւորուի եւ կը յարատեւէ: Ուրախ եմ, որ վերելքի մէջ է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը, որուն առաջին քայլերուն մասնակից դարձայ: Մաղթանքս է, երիտասարդական այս կազմակերպութիւնը առաւել յառաջդիմէ եւ ընդարձակելով իր հորիզոնները հայրենի երիտասարդութիւնը ընդգրկէ իր շարքերուն մէջ»:

Շնորհաւորական երկարաշունչ ծափողոյններով քոյր Քէշիշեանի պարգեւատրումը գնահատելէ ետք, երեկոն զուարթ մթնոլորտով շարունակուեցաւ: Հանդիսավարութիւնը կատարեց Շրջանային Վարչութեան փոխատենապետ եղբ. Փիէր Մանուկեան: Ան իր հերթին ամանորեայ բարեմաղթութիւններ փոխանցելէ ետք, հրաւիրեց մասնաճիւղերու եւ Շրջանային յանձնախումբերու ատենապետները իրենց սրտի խօսքը փոխանցելու:

Բոլոր ելույթ ունեցողներն ալ անձնապէս շնորհաւորելէ ետք օրուան պարգեւատրեալը, փոխանցեցին իրենց ամանորեայ բարեմաղթանքները եւ խոստացան աւելի հաստատակամութեամբ կատարել մասնաճիւղերէ ներս իրենց վստահուած պարտականութիւնները, որպէսզի կարենան առողջ սերունդներ դաստիարակելով նպաստել միութեան վերելքին:

Բարեմաղթութիւններ փոխանցեց



նաեւ «Գէորգ Անտոնեան» սրահի բարերար տիկ. Ալիս Անտոնեան: Ան սրահի անուանակոչման համար իր գոհունակութիւնը յայտնելէ ետք, յոյս յայտնեց, որ սրահը օգտակար գործունէութիւններով միշտ զբաղ կը մնայ, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան իրականացման:

Այնուհետեւ, հայկական գուարթերաթշտութեան ունկնդրութեամբ խրախճանքը շարունակուեցաւ: Նորընտիր վարչութիւնները առիթը ունեցան մօտէն ծանօթանալու եւ համագործակցութեան հաւասար ներշնչելու իրարու հանդէպ:

Խրախճանքը վերջ գտաւ ուշ գիշերին: Մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին նորանոր նուաճումներ ապահովելու յանձնառութեամբ:

# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿ ՆԱՐՊԷՅ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԷՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻՆ

Մարո Քէշիշեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ



Ուրախութեամբ իմացանք, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի մարզիկներէն Նարայէյ Աբրահամեան մարզական իր բացառիկ կարողութիւններուն շնորհիւ մաս կազմած է իր յաճախած Սան Տիէկոյի նահանգային համալսարանի պասքեթպոլի խումբին:

Այս լուրը մեծ ոգեւորութիւն ստեղծեց Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս եւ հպարտութեամբ լեցուց իւրաքանչիւրիս էութիւնը: Ահա իրողութիւն մը, որ կը հաստատէ, թէ Հ.Մ.Ը.Մ.ի ջանքերը ի գուր չեն անցնիր եւ հակառակ ոչ արհեստավարժ իր խումբերու մարզումներուն, Նարայէյի նման մարզիկներ Հ.Մ.Ը.Մ.ի անունն ու պատիւը բարձր կը պահեն ծովածաւալ այս երկրին մէջ, ուր պասքեթպոլը անհամեմատելի մեծ ժողովրդականութիւն կը վայելէ:

Այս ուրախալի լուրը Նարայէյի հետ բաժնեկցիլը դժուար ըլլալով, կապ հաստատեցինք անոր հօր՝ Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի վաստակաշատ անդամներէն եղբ. Արմիկ Աբրահամեանին հետ, եւ որոշ տեղեկութիւններ ստացանք մեր փայլուն մարզիկին մասին:

Նարայէյ Աբրահամեան ծնած է 23 Փետրուար 1991-ին: Եօթը տարեկանին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղին, իբրեւ գայիկ եւ մարզիկ: Աւելի ուշ, մարզական կեանքը նախընտրելով, կեդրոնացած է պասքեթպոլի մարզաձեւին վրայ, միաժամանակ հետեւելով թեթեւ ատլէթի փորձերու:

Տարիներու ընթացքին, աւելի եւ աւելի խորանալով պաս-



քեթպոլի մարզէն ներս, Նարայէյ յաջորդաբար 14 տարիներ մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի մեծագոյն՝ Նաւասարդեան մարզախաղերուն, տիրանալով բազմաթիւ ոսկի մետալներու պասքեթպոլի եւ թեթեւ ատլէթի մարզաձեւերուն մէջ: Յատկանշական է ընդգծել, որ Աբրահամեան առանց ընդմիջումի մաս կազմած է իր մասնաճիւղի Զ-էն մինչեւ Ա-1 դասակարգերու պասքեթպոլի խումբերուն եւ տիրական ներկայութիւն եղած է իր դասակարգի խումբերուն միջեւ մղուող մրցումներուն, յաղթանակի բազմաթիւ կէտեր ապահովելով խումբին:

Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղէն ընդհանրապէս եղբ. Մարթին Աւաննէսեանը մարզիչ ունենալով, Նարայէյի պասքեթպոլի խումբը միշտ մրցած է իրմէ մէկ կամ երկու դասակարգ բարձր խումբերու դէմ եւ արձանագրած է գնահատելի արդիւնքներ:

2011 տարեշրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի Ա-1 խումբին մաս կազմելով, ան իր տպաւորիչ խաղարկութեամբ մեծ դեր ունեցած է խումբին արձանագրած յաղթանակներուն մէջ, որոնց ցայտուն օրինակը Նաւասարդեան Յճրդ մարզախաղերու պասքեթպոլի ախոյեանութեան տիրանալն է:

Նարայէյ Աբրահամեան երկրորդական իր ուսումը ստացած է Գրեեսէնթա Հայ Սքուլի մէջ, ուր իր լաւ խաղարկութեամբ աչքի գարնելով, մաս կազմած է վարժարանի պասքեթպոլի խումբին եւ Գրեեսէնթա Հովիտի





աշակերտական մրցումներուն մաս կազմած է իր խումբի առաջին հնգեակին: Գրեեսէնթա Հայ Սքուլը աւարտելէն ետք, երկու տարի ան յաճախած է Կլէնտէյլ գոլէճ, ուր եւս մաս կազմած է պասքեթպոլի ներկայացուցչական խումբին, դառնալով գոլէճին փնտուռած մարզիկը եւ երկրորդ տարուան ընթացքին մարզիչին կողմէ յայտարարուած է խումբին «Լաւագոյն մարզիկ»ը:

Աւելին, Աբրահամեան «The Coaches of Western State-South Division Conference»-ի կողմէ արժանացած է «All Conference Player» տիտղոսին, իսկ Մայիս 2011-ին, մարզական մաքուր նկարագիրին ու բարոյական օրինակելի կեցւածքին համար եղած է «Տարուան մարզիկ»ի Կլէնտէյլի քաղաքապետութեան թեկնածուն:

Օգոստոս 2011-էն ի վեր ան փոխադրուած է Սէն Տիէկօ, ուր ուսումը կը շարունակէ տեղւոյն նահանգային համալսարանէն ներս՝ մասնագիտանալով շարժախօսութիւն

(Kinesiology) մասնագիտութեան մէջ: Սեպտեմբեր 2011ին, մասնակցած է համալսարանի պասքեթպոլի խումբի գտումի փորձերուն, ուր ճկուն խաղարկութիւն ցուցաբերելով, մարզիչ Սթիւ Զիլլըրի կողմէ հրաւիրուած է խումբ եւ անմիջապէս սկսած է մարզական իր փորձերուն, իսկ 2 Դեկտեմբեր 2011-ին՝ Ազգային Գոլէճական Մարզական Հիմնարկութեան (National Collegiate Athletic Association - NCAA) հաստատումը ստանալով, պաշտօնապէս մաս կազմած է խումբին:

Պէտք է ընդգծել, որ Սէն Տիէկոյի համալսարանի պասքեթպոլի խումբը Արեւմտեան Մ. Նահանգներու լաւագոյն խումբը կը նկատուի, իսկ ներկայիս թիւ 12-ը կը դասուի Մ. Նահանգներու յառաջատար խումբերուն մէջ:

Կը շնորհաւորենք Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Նարպէյի մարզական յաջողութիւնները, անոր մաղթելով նորանոր բարձունքներու նուաճում իր անձնական եւ մարզական կեանքին մէջ:

# Հ.Մ.Ը.Մ-ի ԱԹԷՆՔԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ԳԱԹԱՅԻ ԿՏՐՈՒՄ

Եղիս Ղեւոնդեան ԱԹԷՆՔ

Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի մասնաճիւղի աւանդական դարձած գաթայի կըտրումը կատարուեցաւ յաջողութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ ժողովուրդի լայն մասնակցութեամբ ու խնամուած յայտագիրով:

Երկուշաբթի, 30 Յունուարի երեկոյեան, Ֆիքսի «Աւետիքեան» սրահը բերնէ բերան լեցուած էր Հ.Մ.Ը.Մ-ականներով: Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ եղբ. Նազար Աւագեան, նախ՝ մաղթելով որ 2012-ը ըլլայ երջանկութեան ու յաջողութեան տարի մը ու շնորհակալութիւն յայտնելով բոլոր անոնց, որոնք վերջին տարիներուն նեցուկ կը կանգնին Հ.Մ.Ը.Մ-ի նախաձեռնութիւններուն:

Եղբ. Աւագեան յաջորդաբար հրաւիրեց վարչութեան ատենապետ եղբ. Ֆիլիփ Ծերոնեանը, որ ամփոփ ակնարկ մը քրաւ

Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի մասնաճիւղի մարզական եւ սկաուտական շարժումին, մասնանշելով վերջին տարիներուն իրագործուած յաջողութիւնները:

Տեղին է գնահատանքի խօսք ըսել պասքեթպոլի փոքրերու խումբի ըստեղծման համար: Խումբը յաջողութեամբ կը մասնակցի «տեղական»-ի մրցումներուն եւ ունի ամբողջովին հայ մարզիկներէ բաղկացած կազմ: Գովելի է նաեւ վերջին ամիսներուն տարուած լուրջ աշխատանքը՝ պարմանուհիներու խումբի մը կազմութեան համար:

Եղբայր ատենապետին խօսքէն ետք, մեծ պաստառի վրայ ցուցադրուեցան Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութենէն դրուագներ եւ վերջերս, Պելճիքայի Կանտ քաղաքին մէջ, եղբ. Արա Ժանիկեանի յաղթանակը՝ Զիու-Զիցու մարզաձեւի երիտասարդներու աշխարհի ախոյեանութեան ծիրէն ներս: Եղբ. Արա Ժանիկեան 17 մարզիկներու շարքին՝ 55 քլկ-էն նուազ կարգին մէջ գրաւեց պատուաբեր 8-րդ դիրքը:

Գաթայի օրհնութենէն ետք, շրջանի



հոգեւոր հովիւ Նարեկ Քհնյ. Շահինեանի կողմէ տեղի ունեցան պարզեւատրումներ:

Եղբ. Կարօ Աւագեան յուշատախտակներ յանձնեց եղբ. Սերգօ Էրջէնեանին եւ Յարութիւն Օհանեանին՝ երկար տարիներու իրենց գործօն մասնակցութեան համար, իբրեւ մարզիկ եւ պատասխանատու Ֆուլթպոլի խումբին:

Եղբ. Ֆիլիփ Ծերոնեան պարզեւատրեց քոյր Արշակ Սամուէլեանը՝ տարիներու իր ներդրումին համար, իբրեւ մարզիկ, մարզիչ ու վարչական անդամ:

Ու վերջապէս, Երջանային Վարչութեան անդամ եղբ. Յովհաննէս Ղազարեան յուշատախտակ մը յանձնեց եղբ. Արա Ժանիկեանին Զիու-Զիցուի մարզաձեւի երիտասարդներու աշխարհի ախոյեանութեան մասնակցութեան համար:

Յաջորդեց հիւրասիրութիւն: Զրոյցներու ընթացքին յայտնի էր բոլոր եղբայրներու եւ քոյրերու գոհունակութիւնը:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

## Տիրան Շահինեան ՄՈՆԹՐԵԱԼ

**Մ**արդկային բոլոր հաւաքականութիւններուն մօտ երիտասարդութիւնը հոգատարութեան յատուկ տեղ եւ նշանակութիւն ունի, որովհետեւ տուեալ հաւաքականութիւն մը իր շարունակականութիւնը երաշխաւորած կը տեսնէ երիտասարդութեամբ:

Այս գիտակցութիւնը ունի նաեւ Հ.Մ.Ը.Մ-ը եւ պատահական չէ, որ տարագրութեան առաջին իսկ օրերէն, հայ տարագրեալները, նոյնիսկ իրենց ամէնէն դժնդակ պայմաններուն մէջ, հոգատարութեան առարկայ դարձուցին երիտասարդ սերունդը, անոր մէջ տեսնելով ո՛չ միայն ֆիզիքական ինքնապահպանման, այլ նաեւ՝ ազգային դիմադրի յարատեւութեան գրաւականը: Այդ նոյն հոգատարութիւնն է, որուն պտուղները կը քաղենք այսօր ազգովին:

Յիշեալ հոգատարութեան դրսեւորումներէն մէկն է Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտութիւնը, որ կը համախմբէ մատղաշ տարիքի մանուկներ, իրենց փոխանցելով հայեցի առողջ դաստիարակութիւն: Սակայն, պայմաններու բերումով, մասնաճիւղերէ ներս կիրարկուած գանազան մեթոտները յաճախ առիթ կուտան որոշ դժուարութիւններու, որոնց յաղթահարման միակ միջոցը կը նկատուի միասնական աշխատանքը:

Այս գլխաւոր մեկնակէտէն առաջնորդուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Սկաուտ-Խորհուրդը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային խմբապետական ժողովներ, որոնք



կը նպատակադրեն զարգացնել խմբապետներու համագործակցութեան ոգին, ամրապնդել միջ-մասնաճիւղային կապերը եւ միասնական աշխատանքով հարթել նկատուած դժուարութիւնները:

Այս տարեշրջանի միջ-մասնաճիւղային խմբապետական առաջին ժողովը գումարուեցաւ Կիրակի, 5 Փետրուար 2012-ին, Քինկսթըն քաղաքին մէջ: Ժողովին մասնակցեցան 30 խմբապետ-խմբապետուհիներ, ինչպէս նաեւ՝ վարչական եւ Սկաուտ-Խորհուրդի ներկայացուցիչներ:

Շրջանային Սկաուտ-Խորհուրդի ատենապետ եղբ. Գառնիկ Նազարէթեան բարի գալուստի իր խօսքով դիտել տուաւ ժողովին կարեւորութիւնը եւ շեշտեց ժողովի օրակարգին հանդէպ լուրջ մօտեցում ունենալու անհրաժեշտութիւնն ու յանձնառութիւնը, տալու համար դրական եւ արդիւնաւէտ որոշումներ: Իսկ ամենակարեւորը, հետապնդելու համար տրուած որոշումներուն գործադրութիւնը մասնաճիւղերէն ներս:

Այնուհետեւ, ներկաներու ծանօթացումէն ետք, ժողովը ընտրեց իր դիւանը՝ եղբ. Վահէ Շահինեան՝ ատենա-

պետ, քոյր Դալար Էկոյեան՝ ատենադպիր:

Մասնաճիւղերու սկաուտական գործունէութեան ամփոփ գեկոյցներու ընթերցումէն ետք, Շրջանային ըՍկաուտ-Խորհուրդի ատենադպրուհի քոյր Թալին Չիլինկիրեան ներկայացուց Բ. եւ Ա. Կարգի դպրոց-բանակումի Խորհուրդին արժեւորումը եւ Շրջանային Սկաուտ-Խորհուրդին կողմէ կատարուած

դաստիարակչական աշխատանքներուն գեկոյցը, որոնց շուրջ եղան լուսաբանական կարգ մը հարցումներ:

Օրակարգի գլխաւոր նիւթերէն մէկն էր Գանատայի շրջանի միջ-մասնաճիւղային 6-րդ բանակումին կազմակերպումը: Բանակումը տեղի պիտի ունենայ 14-22 Յուլիս 2012-ին, Սակոնսքա բանակավայրը, Օնթարիոյ Պելլիլի մէջ:

Շրջանային Սկաուտ-Խորհուրդը լուսանկարներով ներկայացուց Սակոնսքա բանակավայրը իր յարմարութիւններով եւ գեկուցեց կատարուած նախապատրաստական աշխատանքներուն մասին, որոնց հիման վրայ եղան առաջարկներ եւ թելադրանքներ բանակումի յայտագրին մասին:

Ժողովին աւարտին, եղբ. Նազարէթեան իր փակման խօսքին մէջ շնորհաւորեց ժողովականները՝ օրակարգի գանազան նիւթերուն իրենց լուրջ մօտեցումին համար եւ գնահատեց խմբապետներուն առաքելութիւնը՝ նորահաս սերունդներուն ազգային դաստիարակութեան գործին մէջ:

Միօրեայ ժողովը վերջ գտաւ յետմիջօրէի ժամը 3:30-ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:



# ԵՂԲԱՅՐ ՎԱՐԴԳԷՍԻ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՄԲ


(ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Սգակիր եղբայր մը  
ԷՇՐԷՖԻԷ

**Վ**երջին հանդիպումին յուզուած ըսիր. «Այս հանդիպումը առյաւելտ բաժնուելու հանդիպում է»: Մենք՝ երեք տարբեր սերունդներու պատկանող հինգ ընկերներ, քեզի այցելելու եկած էինք հիւանդանոց: Մերժեցինք հաստատումը՝ խորքին մէջ նոյն նախազգացումը ունենալով հանդերձ: Վերադարձի ճամբուն լուծ էինք: Ընկերները չըսին, թէ ի՞նչ կը մտածեն, չուզեցին թերեւս, ես ալ ժամանակ չունէի հարցնելու, թէ ինչո՞ւ լուռ են:

Ես գրադած էի քեզմով, մտածումներս հիմնականօրէն քեզի հետ էին, քու միջոցովդ սորվածներս մտքիս մէջ կը տողանցէին ու կը մտածէի, որ երանի՛ կարենայի ծառայել թէկուզ անոնց մէկ մասով: Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ երկար տարիներու ծառայող եղար: Միութեան անդամակցեցար 1939-ին եւ մինչեւ վերջին շունչդ մնացիր հաւատաւոր միութենական: Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ական, հոգեկան գոհունակութիւնը ունէի, որ 2008-ին միութիւնը պատուած էր քեզ՝ արժանացնելով «Արժանեաց» բարձրագոյն շքանշանին: «Ազդակ»ը հարգազրոյցով մը տեղ տուած էր, քու բառերովդ, Հ.Մ.Ը.Մ-ականի փորձառութիւններուդ եւ իրագործումներուդ, որոնց ընդմէջէն աւելի եւս կ'արտացոլար, որ ներկայացուցչական դէմք մըն էիր Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին մէջ:

Վերցուցած պարտաւորութիւններովդ շատեր լաւ կը ճանչնան քեզ՝ եղբայր Վարդգէս: Բայց դաշնակցական ընկեր Վարդգէսը կը ճանչնանք մենք՝ Պալաքեանի ընկերներս (ինչպէս միշտ դիտումնաւոր կը շուարէիր «Ազատամարտ» կոմիտէ ըսելու փոխարէն՝ յիշեցնելով, որ դէմ էիր անուանափոխութեան): Մենք՝ «Ազատամարտ»ի ընկերներս, վայելած ենք դաշնակցականի վեհ եւ օրինակելի գիծերդ: Հ.Յ.Դ. շարքերու մուտքը փակուած ըլլալուն պատճառով, երկար սպասեցիր: Ապա, առաջին առիթին մուտք գործելով՝ կանաչ տարագ ալ հագուեցար: Ես այդ օրերուն պատանի էի, կը դիտէի քեզ, թէ ինչպէ՛ս պահակ ընկերներուն ճաշը ժամը-ժամուն հասցնելու իրարանցումին մէջ կ'ըլլայիր՝ աշխատանքի ոգիդ վարակիչ դարձնելով բոլորին:



Դժուարին օրերուն կոմիտէի անդամ էիր, միեւնոյն ատեն մեզի հետ պահակութեան կարգ ունէիր: Տարիքի տարբերութիւնը չէինք զգար քեզի հետ, համեստ էիր, բայց ինքզինք պարտադրող, դաստիարակ էիր՝ մեր բառերը գործածելով եւ հատիկ-հատիկ գաղափարներ փոխանցելով: Կրնայինք հետդ խօսիլ ամէն նիւթի մասին: Արդեօք նոր սերունդը ունի՞ այս կարելիութիւնը այսօր:

Մեր պատանեկութեան օրերուն իսկ մեզի ընկեր մակդիրով կը դիմէիր: «Ընկեր» բառին գործածութիւնը լոկ գուգադիպութիւն կամ սովորութիւն մը չէր քեզի համար, այլ՝ գաղափարաբանութեան մը դրսեւորում, պատկանելիութեան յայտարարութիւն, համեստութիւն, միեւնոյն ժամանակ սահմաններու գիտակցութեան ցուցանիշ: Արդեօք կա՞յ «Ազատամարտ»էն ընկեր մը, որ յիշէ իր անունով կանչուելը քեզմէ... Անկարելի:

Տակաւին կայ եկեղեցական-ազգային ծառայութիւնդ, զոր կատարեցիր էշրէֆիէի Ս: Յակոբ եկեղեցւոյ թաղականութեան ատենապետի երկար տարիներու նուիրական աշխատանքովդ: Իբրեւ պարտականութիւն ըստանձնած այս պաշտօնին իսկական տէրը եղար, գործեցիր եկեղեցւոյ համար: Անոր բարգաւաճման ու յարատեւման աշխատանքին լծուեցար բոլոր կարելիութիւններովդ՝



Յոկտ. 1987. Եղբ. Վարդգէս կ'առաջնորդէ «Չաւարեան» դաշտին բացման հանդիսութեան հիւրերը:



սիրելին ու հարազատը ըլլալով մեծին ու փոքրին, եկեղեցւոյ երգիքին տակ գործող բոլոր միաւորներուն:

Ընկեր Վարդգէս, այսուհետեւ ո՞վ պիտի ստանձնէ ժողովներէ բանաւոր բացակայութեան սահմանումը՝ աններող ըլլալով անտեղի պատրուակներ ներկայացնողներուն նկատմամբ:

Եղբայր Վարդգէս, Հ.Մ.Ը.Մ.ի ժողովներուն ո՞վ միութեան նկատմամբ մնայուն գուրգուրանքի եւ հոգածութեան կոչ պիտի ուղղէ:

Մեր սիրելի երէ՛ց ընկեր, շաբաթական դրութեամբ մենք տակաւին պիտի սպասե՛նք, որ հեռաձայնին միւս կողմէն ձայնդ լսենք, շատակդ պատգամող պիտի մնայ:



պիտի գտնե՞նք մէկը, որ իր հիւանդ վիճակին մէջ իսկ մարդ պիտի չմոռնայ եւ հեռաձայնով պիտի կապուի բոլորին հետ:

Սիրելի՛ ընկեր Վարդգէս, մահուանդ գոյժը առի, երբ երկրէն դուրս էի, չկրցայ «Վէրքերով լի» երգել՝ քեզ հողին յանձնած ատեն: Այս մտորումներն ու երկխօսութիւնը, զոր մեր վերջին հանդիպումէն ծնան մէջս՝ ընդունէ իբրեւ ծաղկեպսակ:

Հողը թեթեւ գայ վրայդ, յի-

# ՆԱՄԱԿ՝ ՅԵՏ ՄԱՀՈՒ

(ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ԱՃԻՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)


## Միհրան Շիմշիրեան ՊԵՅՐՈՒԹ

**Բ**նաւ տրամադրութիւն չունէի քու մասիդ գրելու, բայց այնպէս մը պատահեցաւ, որ հանդիպեցայ գործատեղիդ եւ հոն յանկարծ զգացում մը պատեց էութիւնս... Բացակայութիւնդ:

Կը կանչէին քեզ աշխատանոցդ: Ժպիտը դէմքիդ կը մտնէիր գրասենեակ, պատրաստ՝ սուրճ խմելու եւ խօսելու մեզ տազնապեցնող հարցերու մասին, որոնք քաղաքականութիւն կամ լիբանանեան հարցեր չէին, այլ՝ մեզ տազնապեցնող, միութենական մեր ամէնօրեայ մտահոգութիւնները եւ անոնց ընդմէջէն՝ մեր ազգային հարցերը:

Միշտ տազնապող էիր Ազգային Առաջնորդարանի մտահոգութիւններով, մեր համայնքին վիճակով եւ ամէնէն կարեւորը՝ Հ.Մ.Ը.Մ.ով ու յատկապէս՝ Փութպոլով: Քեզի համար Փութպոլը մեծ նշանակութիւն ունէր մեր ժողովուրդը ներշնչելու իմաստով: Կ'ուզէիր որ ունենանք Փութպոլի դպրոց մը, ուր պատրաստենք Փութպոլիատներ, որոնք ուսանին ակադեմիական ձեւով:

Ընդհանրապէս հանդարտ եւ լայնախոս էիր տուած որոշումներուդ մէջ, անոնք ըլլա-



յին անձնական գործիդ կամ միութենական պարտաւորութիւններ ստանձնած ժամանակ:

Կ'ուզէիր ստեղծել բարևք պայմաններ Հ.Մ.Ը.Մ.ի համար եւ այդ հեռանկարով էր, որ ընկերներուդ հետ նախաձեռնողը եղար ներկայի «Ազրալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային կեդրոնի հողաշերտին գնման:

Տարիներ շարունակ եղար Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի վարչական, շրջան մըն ալ՝ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ ու ատենապետ: Պաշտօնները չփոխեցին քեզ, աւելցուցին պարտաւորութիւններդ ու արժանիքներդ: Դուն մնացին միշտ համեստ ու նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական եւ անտրտունջ կատարեցիր քեզի վստահուած բոլոր աշխատանքները:

Չորս տարի առաջ ի յայտ եկաւ անհանգստութիւնդ, ապա տեղի ունեցաւ վիրահատութիւնդ, որմէ ետք ժպտուն դէմքով

պայքարեցար՝ բնական կերպով շարունակելու համար կեանքդ: Այդ ժամանակը շատ արագ անցաւ:

Այսօր մեզմէ յաւէտ բաժնուած ես, բայց մեր մտքին ու սրտին մէջ պիտի մնայ համեստ եղբոր քու մեղմ ժպիտդ:

Հպարտ էինք քեզմով:

Կորսնցուցինք հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը:

Հանգիստ քեզի, սիրելի՛ եղբ. Աճէմեան:





# ՎԻՓԷՆ ՄԱՍԷՐԷՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## Վարուժան Սերոբեան ՄՈՆԹՐԵԱԼ

Միրելի Վիգէն,

Վերջին գրոյց մը կ'ունենամ հետդ: Այսօրուան գրոյցը տարբեր է հեռաձայնային մեր պարբերական խօսակցութիւններէն. դուն երկար կը խօսէիր, իսկ ես՝ կարճ. նիւթերդ՝ շատ խմս՝ քիչ:

Այսօր ես կը խօսիմ, դուն լուռ ես:

Այսօր փոխան ազգային նիւթեր արծարծելու պիտի ըսեմ այն բոլորը, որոնք չէի ըսեր քեզի:

Մեր բարեկամութիւնը կու գայ հինէն, երբ սկսուտ էիր եւ «Առիւծ» խմբակի առաջնորդ, երբ տիպար աստիճանաւոր էիր ու եռանդով խմբային ոգի եւ խանդավառ մթնոլորտ կը ստեղծէիր:

Լսած եմ դասընկերներէդ, որ եղած ես «անառակ» աշակերտ, բայց որովհետեւ ուշիմ էիր, յաջողութեամբ բոլորած ես ուսումնական հանգրուանները ու եղած ես վկայեալ ատամնաբոյժ:

Ձգեցինք Եգիպտոսը ու միացանք Մոնթրէալ:

Պատկանելիութեան զգացումդ զօրաւոր էր եւ նորակազմ այս գաղութի կեանքին բերիւր դրական մասնակցութիւն: Յարատեւութեամբ մասնագիտացար ատամնաբուժական ասպարէզին մէջ եւ ընտրեցիր համալսարանի դասախօս ըլլալու ասպարէզը՝ «Universite de Montreal»-ի մէջ: Երիտասարդ



ատամնաբոյժներու հունձքեր հասցուցիր, վայելելով բոլորին յարգանքն ու համակրանքը:

Եղար պարտաճանաչ հայ ու կազմեցիր աւանդական ընտանիք: Համեստարար եւ գոհունակութեամբ կ'արտայայտուէիր տիկնոջդ՝ Ալիսին եւ գաւակներուդ մասին: Ուրախութեամբ կը նշէիր Արամին նախաձեռնութիւնները կամ Րաֆֆին ստանձնած ֆուտպոլի մարզիչի յաջողութիւնները, որովհետեւ

ֆուտպոլը կը սիրէիր ու մարզիկի ապրումով կը ներկայացնէիր խումբին յաղթանակները:

Միութենական ծառայութիւնը ամէն հայր պարտականութիւնը կը նկատէիր: Մոնթրէալի մէջ եղար գործօն անդամ երիտասարդական միութեան եւ Հ.Մ.Ը.Մ. - «Կամք»-ի Սկսուտ. Խորհուրդի ատենապետ եւ մասնաճիւղի վարչական: Կը յիշեմ երբ Խորհուրդի հերթական ժողովները կը գումարէինք դարմանատանդ մէջ, երբ չունէինք այս կեդրոնը:



Հաւատացիր Հայ Կեդրոն մը ունենալու անհրաժեշտութեան, որուն ծրագրային շրջանէն մինչեւ «յրացուցիչ շինութիւններու ամբողջացումը» նուիրաբերումով գործեցիր:

Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի շրջանի կազմութեան օրերուն եղար դերակատար ու մաս կազմեցիր Հ.Մ.Ը.Մ-ի առաջին Շրջանային Վարչութեան կազմին:

Աւելի ուշ արժանացար Հ.Մ.Ը.Մ-ի «Երկար Մառայութեան» պատուանշանին: Եղար Ս. Յակոբ Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամ, ձեռնհասօրէն տանելով ատենադպիրի պարտականութիւնները: Քիչեր կը յիշեն որ այդ օրերուն յարատեւ բժախնդրութեամբ դասաւորեցիր եկեղեցւոյ արխիւները:

Մեր հանգանակութիւններուն ոչ միայն կազմակերպական ճիգ ու գործ դրիր, այլ նաեւ՝ բերիւր գովելի մասնակցութիւնդ:

Յատուկ հետաքրքրութիւն ունէիր Հայաստանի Հանրապետութեան պատմութեան եւ անոր ղեկավար դէմքերու կեանքին ու գործին նկատմամբ:

Մեր գաղութի բացառիկ ընթերցասէրներէն մէկն էիր, մնայուն յաճախորդ «Համազգային»ի գրատարածին կամ գրադարանին եւ անոր զոյգ նուիրատուներէն մէկը:

Բոլոր անոնք որոնք անցնող տասնամեակներուն ճանչցան քեզի, տեսան քու պարզ ու համեստ նկարագրի գիծերդ՝ կա-



տակախօսութիւններով համեմուած: Ծանօթացանք քու գաղափարական ամուր համոզումներուդ: Ճանչցանք անխառն դատողութիւնդ: Մօտդ տեսանք փոխադարձ յարգանքի սկզբունքով մշակուած բարեկամութիւններ: Ծանօթացանք խստապահանջ աշխատելաձեւիդ եւ այն յատուկ ձիրքին, որ ջերմ մթնոլորտ կը ստեղծէր շուրջդ, անցեալի «Առիւծ» խմբակի ոգին յիշեցնելով:

Չեմ մոռնար տրամաբանական վերլուծումներդ կամ ախտաճանաչումներդ, յատկապէս՝ սրտբաց նկատողութիւններդ, թէեւ այս վերջինը ոմանց համար նեղացուցիչ ըլլալու գնով: Տեսանք նաեւ, որ պատանի տարիքէդ կարողացար բացառիկ քաջութեամբ դիմագրաւել կեանքի դժուարին մարտահրաւէրները:

Մնայուն ներկայութիւն էիր մեր կեդրոնին մէջ: Անձամբ կու գայիր անյապաղ ունենալու «Հորիզոն» շաբաթաթերթը կամ Կեդրոնի ճաշարահոլ՝ գրուցելու ազգային կամ գաղութային մտահոգութիւններու մասին, կամ ծանօթանալու «գրատարած»ի նոր ստացած գիրքերուն:

Կ'ըսուի, թէ անփոխարինելի մարդ չկայ, ճիշդ է: Սակայն ո՞վ պիտի փոխարինէ Վիգէնը: Յատկապէս որպէս անխառն համոզումներով հայ, հոգեկան ապրումներով, սկզբունքներու տէր ազգային, որպէս անխոնջ ընթերցող, որպէս կատա-

կասէր ու անկեղծ բարեկամ կամ պարտաճանաչ միութենական գործակից:

Գիտեմ որ Հայաստանն ու Արցախը տեսնելը քեզի համար մնաց երազ- չէիր խօսեր այս մասին: Բայց կը հաւատամ որ գաւազներդ օր մը պիտի իրականացնեն փափաքդ:

Այսօր մեզմէ յաւէտ կը բաժնուիս:

Ինչպէս պարտաճանաչ գայլիկին օրէնքը կ'ըսէ՝ «Դուն ըրիր լաւագոյնդ», որպէս ընտանիքի հայր, որպէս փրկուած համալսարանական դասախօս, որպէս սիրուած բարեկամ եւ որպէս ծառայասէր ազգային:

Վարձքդ կատար սիրելի Վիգէն:

Մեզմէ թէեւ կը բաժնուիս, սակայն նախանձախնդիր օրինակդ կը մնայ մեզի հետ, որպէս արթուն պահակը մեր կազմակերպութիւններուն:

Թէեւ կը բաժնուիս, սակայն կ'երթաս միանալու յարգելի ծնողքիդ եւ կրտսեր քրոջդ՝ Թենիին:

Մեզմէ կը բաժնուիս միանալու քեզի ու ինծի ծանօթ հաւատաւորներու փաղանգին:

Ու ես ալ քեզմէ կը բաժնուիմ վերջին անգամ ըսելով՝ «Շասու» Վիգէն:

(Եկեղեցւոյ մէջ ընթերցուած դամբանական)

## «ՀԻՆ ՏՂՈՑՄԷ ՄԷԿՆ ԱՎ ԳՆԱՑ»

(ԵՂԲ. ԳՐԻԳՈՐ ԳՈՒՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

### Մոսիկ Թօփուզեան ՄՈՆԹՐԵԱԼ

**Կ**եանքի մէջ պահեր կան, որ յանկարծ հին յիշատակ մը կամ պատկեր մը կ'արթնցնեն մտքիդ մէջ: Հաւանաբար եղբ. Գօգոյին մահը, որ պատահեցաւ 30 Յունուար 2012-ին, այդ մէկը արթնցուց մէջս:

1977 տարեշրջանի Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի տարեկան ընդհանուր ժողովին էր, Կիրակի կէսօրէ ետք մը: Ժողովին ընթացքին, պատասխանատու եղբայր մը մօտենալով ըսաւ, թէ նկատի առած են զիս վարչական ընտրել:

Կ'երեւի այդ տարի որոշուած էր քանի մը երիտասարդ տղաք առնել վարչական կազմին մէջ: Ընտրուեցայ, սակայն կազմին մնացեալ անդամները գրեթէ չէի ճանչնար: Ժողովին աւարտին, դիւանին ատենապետը յայտարարեց, թէ վարչութեան առաջին ժողովը տեղի պիտի ունենայ յաջորդ Երեքշաբթի երեկոյեան, վարչութեան գրասենեակին մէջ: Որոշուած ժամուն, զարկի սենեակին դուռը: Ներսէն, քիչ մը խիստ ձայնով «մտի՛ր» մը արձակուեցաւ: Բացի դուռը, ներսը սիկարէթին ծուխը բաւական տեղ գրաւած էր: Վախկոտ եւ տատամսոտ քայլերով մտայ եւ



նստայ անկիւն մը: Գօգոյին կողքին, հոն էին Նազարէթ Կէլոյեանը, Վարուժան Գէորգեանը, Սարգիս Օվայեանը, Զաքար Զորպաճեանը, Կարօ Համալեանը եւ այդ օրերուն Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յովհաննէս Տէր Յարութիւնեանը: Պահը ինծի համար բաւականին նեղացուցիչ էր, որովհետեւ մանուկ մըն էի այդ խումբին մէջ եւ տեսակ մը օտարական: Սակայն հազիւ ամիս մը անցած, դարձած էի բոլորին կողմէ սիրուած, եւ իրենք ալ ինծի համար սիրելի ու մեծ յարգանքի արժանի տղաք: Յաջորդող քանի մը տարիներուն եւս վարչական կազմերու մէջ ըլլալով այդ տղոցմէ սորվեցայ, թէ ինչ է Հ.Մ.Ը.Մ-ը եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը: Այդ տղաքը սիրով եւ համբերութեամբ դաստիարակեցին, սորվեցուցին, իրենց գիտելիքները փոխանցեցին եւ զիս պատրաստեցին ապագային համար:

Այսօր, երբ եղբ. Գօգօն ալ գացած միացած է իր հին եղբայրներուն, պահ մը կը մտածես եւ կը յիշես այդ տղոց կարեւորութիւնը եւ ձգած գրոշմը քու միութենական դաստիարակութեանդ եւ մանաւանդ կեանքիդ մէջ:

Գանատայի հողը եւ ձիւնը թեթեւ ըլլայ վրադ յարգելի՛ եղբայր:



# ՕՂԱԿԱՅԱՆ



## Պատրաստե՛ց՝ Շաղիկ Գեորգեան ՊԵՅՐՈՒԹ

**Օ**ղակայանը այն տեղն է, ուրկէ կը մեկնին եւ վայրէջք կը կատարեն օդանաւերը: Սովորաբար օղակայանները կը շինուին քաղաքներէն բաւական հեռու, որպէսզի օդանաւերուն աղմուկը չխանգարէ քաղաքին բնականոն կեանքը: Միջազգային օղակայանները կ'աշխատին գիշեր ու ցերեկ: Անոնց մեծ մասին մէջ ստեղծուած են իրենց թռիչքները սպասող ճամբորդներու սպասարկման, գնումներու, դրամատնային ծառայութիւններու եւ այլ կարելիութիւններ: Պեթոնէ, ապակիէ եւ մետաղէ կառուցուած շէնքը օղակայանին կայարանային շէնքն է: Աշտարակը հրամաններ արձակելու գլխաւոր վայրն է, ուրկէ պատասխանատուն ան-

թել հաղորդակցութեամբ կապ կը հաստատէ օդաչուներու հետ, ցուցմունքներ կու տայ, թէ ե՞րբ վայրէջք կատարեն կամ ե՞րբ սկսին թռիչքը, կը հաղորդէ եղանակին ի՞նչպէս ըլլալը եւ այլն:

Կայարանային շէնքին առջեւի պեթոնածածկ ընդարձակ հրապարակին վրայ կը կանգնին օդանաւերը: Հոն օդանաւերը կը բեռնաւորուին վառելանիւթով: Բեռնատար ինքնաշարժներով օդանաւեր կը փոխադրուին ճամբորդներու բեռները: Ճամբորդները օդանաւերուն կը մօտենան հանրակառքերով կամ կայարանային շէնքին յատուկ ելքերով:

Օղակայանին մէջ կը գործեն յատուկ ծառայութիւններ.- բեռնափոխադրութեան բաժինը, անձնագրային հսկողութիւնը, մաքսատունը, բժշկական սպասարկութիւնը եւ այլն: Ապահովական մարմիններ կը քննեն ճամբորդները եւ կը ստուգեն անոնց պայուսակները, որմէ ետք միայն անոնք կրնան ճամբորդել:

## ԿՐԱԿԸ

**Կ**րակը մարդիկ օգտագործած են հնագոյն ժամանակներուն: Սկիզբը անոնք օգտուած են կայծակէն կամ օրկանական մնացորդներու յառաջացուցած բնական կայծերէն:

Հետագային, մարդիկ կրակը ւստացած են փայտէ կտորները իրարու շփելով կամ կայծքարի միջոցով: 19րդ դարու վերջաւորութեան գրտնուած է ծծումբէ լուցկին:

Կրակի վրայ մարդիկ կերակուր

կ'եփէին, կրակով կը վախցնէին գազանները, կրակով կը տաքցնէին բնակարանները: Մարդիկ կրակը կ'երկրպագէին իբրեւ Աստուած (կրակապաշտութիւն): Հին ժամանակներուն, կրակապաշտութիւնը տարածուած էր նաեւ Հայաստանի մէջ: Մինչեւ հիմա մեր ժողովուրդը կը տօնէ Տեառնընդառաջի տօնը, որու ժամանակ մարդիկ խարոյկներ կը վառեն, անոր շուրջը կը դառնան եւ կրակին վրայէն կը ցատկեն:





# ՕՂԱՆԱԷ



**Թ**

ուչող սարքերու առաջին գծագրող-թիւնները յայտնաբերւած են վերածը-

նունդի դարաշրջանի իտալացի մեծ նկարիչ, քանդակագործ եւ գիտնական Լէոնարդո Տա Վինչիի ձեռագիրներուն մէջ: Անկէ ետք բազմաթիւ գիտնականներ գրադած են թուչող մեքենաներ ստեղծելով: Ոմանք թուչունները կապկելով՝ իրենց մարմնին թեւեր յարմարցընելով կ'ուզէին օդը բարձրանալ: Բայց մարդը երկինք ճախրեց ո՛չ թէ մկաններու, այլ՝ բանականութեան ուժով:

Առաջին անգամ 1903 թուականի Դեկտեմբերի 17-ին օդ բարձրացաւ քերոսինով աշխատող «Ճլայրը» օդանաւը, զոր ստեղծած էին ամերիկացի Օրուելլ եւ Ուիլպըր Ռայթ

եղբայրները: Օդանաւը կտրեց 35 մեթր ճամբայ: Թէեւ թռիչքը տեւեց 12 երկվայրկեան, սակայն ասիկա առաջին թռիչքն էր՝ վերասլացքով եւ վայրէջքով: Ուրեմն, Ռայթ եղբայրները կը նկատուին օդանաւային առաջին թռիչքը կատարողները:


1930-ական թուականներու վերջերուն ստեղծուեցան ճամբորդատար օդանաւերը: Այժմ, պատրաստուած են այնքան գերհզօր օդանաւեր, որ խնդիրը ոչ թէ անոնց արագութիւնը աւելցնել է, այլ՝ գանոնք աւելի խնայողական դարձնելը: Օդանաւային ժամանակակից համակարգին մէջ կարեւոր նշանակութիւն ունին համակարգիչները: Կան նոյնիսկ օդանաւեր, ուր օդաչուն անմիջականօրէն չի ղեկավարեր թռիչքը, այլ՝ միայն կը հետեւի ղեկավարող սարքերուն:

## ՀԱՆՆԵԼՈՒԿ



Ո՞վ է, ի՞նչ է: Անհուն կապոյտը կը կտրէ կ'անցնի, Մեզ իր գիրկը առած հեռուները

կը տանի: Կը ճախրէ ծովուն ու ցամաքին վրայ: Գուշակեցէք թէ ի՞նչ է ան: (Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր ծիւն):





## Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

## ՍՈՒՏՈՔՈՒ

4			9		8			2
	6			2			3	
		9		6		5		
9			8		1			3
	7	1				9	2	
5			2		7			1
		8		4		3		
	2			8			7	
3			7		6			8

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

### Նախորդին լուծումը

7	6	3	8	5	4	2	9	1
5	8	1	2	9	3	6	4	7
9	4	2	1	6	7	8	5	3
6	7	5	3	8	1	9	2	4
4	2	9	6	7	5	3	1	8
1	3	8	4	2	9	7	6	5
2	1	6	5	3	8	4	7	9
3	5	7	9	4	6	1	8	2
8	9	4	7	1	2	5	3	6

Պատասխանը՝ յաջորդի



### ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ


1. «Ֆորմիլա 1»-ի պրագիցի մրցավարորդ:
2. Գոյականի տեսակը բնորոշող:
3. Բազմութիւն - Կարճահասակ:
4. Լերան շուք մասը - Կրկնուած բաղաձայններ:
5. Վէրքի կեղեւ - Մոխիր:
6. Արգահատանք - Գաւազանիկ:
7. Բոսոր - Արական օտար անուն - Իգական օտար անուն:
8. Յովհաննայի հայրը - Դ. դարու հերետիկոս - Զայնակից գիրեր:
9. Պառակտումի սերմ - Պրագիցի Ֆոլթպոլիստ:
10. Զայնանիշ - Հացագործ - Մեղմ հով:
11. Բուռ - Կարողութիւն ունեցող:
12. Մարտիրոս - Տափակ դղման - Որոշուած գին:
13. Վատառողջ - Քայլաչափ:
14. Զէնքի թիրախ - Կեղտոտ, սեւցած:
15. Տառի մը անունը - Մէկը:
16. Նշմարել - Գիւղական կրակարան:
17. Հայրենի ճատրակի վարպետ:
18. Բուսնիլ - Հոյլ - Կոկորդի գեղձ:
19. Տանիքի դուրս ցցուած եզերք - Կրակի գոյն - Պոչ:
20. Արական օտար անուն - Իրերայաջորդ գիրեր - Ամբողջական հաց:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Դանիացի թենիսփուժըն:
2. Համաճարակ հիւանդութիւն մը - Ուսոսկը - Պարանոց:
3. Համադասական շաղկապ - 2600 - Խակ - Բուսական սննդանիւթ մը:
4. 1994-ի լաւագոյն Ֆիլմի Օսքարին արժանացած ժապաւէնը - Խաղաթուղթի մէկնոց - Խորշիլ:
5. Թռչուններու խումբ - Եղեգնացուպ - Շաղկապ - Յուցական ածական:
6. Այծուղտ - Հանգանակ - Շրջան, միջոց:
7. Փոքրացնող մասնիկ - Տառի մը դրացիները - Յօժարութիւն - Արեւելեան խաղ մը:
8. Կղպուած - Քաջալերուիլ - Կրկնուած բաղաձայններ - Իգական անուն:
9. Հայկական շարականի խաղ մը - Տաղաւար - Գալարուն:
10. Եւրոպական մայրաքաղաք - Լծորդութիւն - Դղրդոց - Դարձեալ:
11. Ճափոնական օդանաւային ընկերութիւն մը - Դալարաւէտ - Խաղողի կուտ - Կրկնուած բաղաձայններ:
12. Վայրի արու խոզ - Մոյթ - Ռոմի Շնայտրրի Ֆիլմերէն - Աստուած:
13. Այբուբենէն - Խաղ - Մարտունիի գիւղերէն:
14. Գետեգերեայ ծառ - Արական օտար անուն - Փականք:
15. Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գաւառներէն - Աբացիլ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1  
2  
3  
4  
5  
6  
7  
8  
9  
10  
11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20



ԽԱՉԲԱՌԻ ԳԿՄԹՅՈՒՄ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1	Ս	Ե	Ն	Թ	Է	Թ	Ի	Է	Ն										
2	Ա	Ղ	Ա		Լ	Ի	Ն	Տ	Ա										
3	Մ	Ի	Շ	Տ		Ր	Ա	Մ											
4	Ո	Ի	Ր	Ն	Ա		Ո	Վ											
5	Ձ	Ա	Ի	Ի	Հ	Ե	Ռ	Ն	Ա	Ն	Տ	Է	Ս						
6	Ձ	Ա	Պ	Է	Լ		Խ	Ն	Ա	Մ		Ա	Ր	Ա	Մ				
7	Ս	Տ	Ա	Լ	Ի	Ն		Ա		Պ	Ո	Ր	Ա	Ն	Ի				
8	Պ	Ի	Շ		Կ	Ա	Ս	Կ		Ա	Տ	Ե	Ն	Շ					
9	Ա	Կ	Ա	Ն	Ա	Տ				Մ	Ա	Լ		Թ	Է				
10	Ն		Ի		Մ	Ի				Ա	Ն	Ճ	Ի	Լ					
11	Ա	Ս		Կ	Ա					Մ	Ա	Ի	Ի		Փ				
12	Կ	Ա	Պ	Ա	Լ					Ի	Գ	Ա	Լ						
13		Մ	Ա	Ն	Ա	Մ	Ա		Ա	Տ	Ո	Մ		Ն	Ա				
14	Գ	Ո	Յ	Ա	Մ	Ա	Ր	Տ		Ա	Ր	Ա	Ֆ	Ա	Թ				
15	Ա	Յ		Յ	Ա	Ր		Յ	Ե	Ղ		Կ	Ո	Ր	Ի				
16	Պ	Ր	Ր	Ի		Տ	Ա		Ձ		Կ	Ա	Ր	Ի	Ն				
17	Ա		Է		Ք	Ի	Ր	Ս		Մ	Ո	Ր	Մ		Ի				
18	Ր	Է		Մ	Ա	Ֆ	Ի	Ա		Ա	Ն	Գ	Ո	Հ					
19	Է	Թ	Ն	Ա		Ի	Ս	Պ	Ա	Ռ		Ա	Ձ	Ա	Տ				
20	Ա	Ն	Տ	Ա	Շ		Ռ		Ն	Ա	Կ	Ա	Ն	Օ					





# ՀԱՅԿԱԿԱՆ

Տ ր ւ ի ո մ է

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆԸ

(Լիբանան, Բեյրութ)

«Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար»  
համահայկական ամենամյա մրցանակաբաշխության  
«Լավագույն երիտասարդական կազմակերպություն» անվանակարգում  
առաջին կարգի մրցանակի արժանանալու համար:

ՀՀ ՍՓՅՈՒՆՔԻ ԽԻՆԱԿԱՐԳ



ՀՐԱՆՈՒՄ ՀԱՎՈՅՑԱՆ

*[Handwritten signature]*  
«18» հունվարի 2012 թ.

Երևան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԿՈՆԳՐԵՍԻ ՆԱԽԱԳԱՀ

/ ԱՐԱ ԱՐՄԱՀԱՄՅԱՆ

*[Handwritten signature]*